

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2015 ԹՎԱԿԱՆ N 1-2 (1312-1313) Հունվար-փետրվար





Հունվարի 28 ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐ

Ե՛վ հայկական բանակը, և՛ նրա բժշկական ծառայությունը ծնվեցին մեզ պարտադրված պատերազմի ընթացքում: ՀՀ զինված ուժերի կազմավորման տոնի առիթով շնորհավորում ենք նաև զինվորական բժիշկներին, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի անձնակազմին և կուրսանտներին:



Փետրվարի 14 ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Տոնի հիմնական խորհրդանիշը կրակն է, որի գոյությունը շատ հաճախ կապվում է հեթանոսության հետ: Հայ առաքելական եկեղեցին կրակի խորհուրդը բացատրում է այսպես. «Մենք կրակը վառում ենք և ցատկում նրա վրայով: Մենք պաշտում ենք այն, ինչ բարձր է մեզանից, այդ իսկ պատճառով չենք կարող կրակը պաշտել: Կրակը, ուղղակի, Աստծո լույսն է»:



Փետրվարի 16 ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Աշխարհում օնկոլոգիական հիվանդություններով տառապում է 175.000 երեխա, որոնցից 90.000-ը հետագայում մահանում է: Ընդ որում՝ սա ոչ հստակ վիճակագրություն է, քանի որ ոչ բոլոր դեպքերն են գրանցվում: Մինչդեռ՝ բժիշկների կարծիքով, վաղ և ճիշտ ախտորոշման և ժամանակին բուժումն նշանակելու դեպքում չարորակ ուռուցքների 70%-ը հնարավոր է բուժել: Մանկական քաղցկեղի հետ կապված իրադրությունը հատկապես ծանր է քիչ զարգացած երկրներում: Եթե զարգացած երկրներում բուժվում է այս հիվանդությամբ տառապող երեխաների 80%-ը, ապա այստեղ ամեն ինչ հակառակն է: Քիչ զարգացած երկրներում կա մանկական քաղցկեղի մասին իրազեկության պակաս կամ, ընդհանրապես, բացակայություն:


ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
Editor SEDA TOROSYAN

Թղթակից
ԱԻՂԱ ՀԱԿՈՒԲՅԱՆ
Անգլերեն նյութերի պատասխանատու
ԱՆԱՅԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝
ՎԱՐԴՈՒՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» հիմնադրամ:

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարությունում:
Գրանցման վկայական N 299: Տպագրվում է
«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ հրատարակչությունում:
Հասցե՝ Երևան 0025, Կորյունի փ. 2
Հեռախոս՝ (060) 62-12-46, 2-46,
E-mail: apagabzhishk@ysmu.am
Ծավալը՝ 48 էջ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Անվճար:



Փետրվարի 16 ՀԱՅԿ ԿԱՆԱՅԱՆ -140 ԱԿՆԱԲԱՆ, ՎԻՐԱԲՈՒՅԺ (1875-1950)

Ծնվել է Իգդիրում: Ինը տարեկանում ընդունվել է Երևանի ռուսական գիմնազիա և միջնակարգ կրթություն ստանալուց հետո՝ 1893-ին ընդունվել Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիա: Հիվանդության պատճառով վերադարձել է հայրենիք և մանկավարժական աշխատանքի անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև ընդունվել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտել է 1904-ին և երկու տարի եղել ակադեմիայի ակնաբույժ պրոֆ. Վ.Ֆիլատովի կլինիկայի ավագ օրդինատոր: Հ.Կանայանը երկար տարիներ աշխատել է Քիշնևում, Վլադիկավկազում և Բաքվում, այնուհետև տեղափոխվել է Երևան, աշխատել Երևանի քաղաքային բուժարանում: 1925-ին հրավիրվել է ԵՊՀ և բժշկական ֆակուլտետում հիմնադրել աչքի հիվանդությունների ամբիոն:

Փետրվարի 19 ԳՐՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՕՐ




Ամենայն հայոց բանաստեղծ Յ. Թումանյանի ծննդյան օրը տոնացույցում նշվում է նաև որպես գիրք նվիրելու օր: Թումանյանական օրերի ժամանակ, երբ գրողները Դսեղում կարդացել են Թումանյանի ստեղծագործությունները՝ հավաքված պատանիները դժգոհել են, որ գրքեր չունեն, եղածն էլ պատահուով է: Հենց այդ փաստն է պատճառ դարձել, որպեսզի հայ գրողների միության, մշակույթի նախարարության, ազգային գրադարանի ու հասարակական կազմակերպությունների աջակցությամբ նախաձեռնվի ամենամյա միջոցառում՝ գիրք նվիրելու տոն: Միջոցառման նպատակն է հանրության ուշադրությունը սևեռել գրքի վրա ու հերթական անգամ կարևորել նրա նշանակությունն ու դերը:

Փետրվարի 21 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

1952-ին Դաքայում (Պակիստան) ոստիկանների կրակոցներից սպանվեցին մի խումբ երիտասարդներ, ովքեր դուրս էին եկել բողոքելու՝ ուրդուն միակ պետական լեզու ճանաչելու կառավարության որոշման դեմ: Ի հիշատակ այդ պայքարի՝ 1999-ից ի վեր ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է մայրենի լեզվի միջազգային օրը:

Միդենյի էշֆիլդ գրոսայգում նույնպես, ի հիշատակ բենգալացիների պայքարի, կանգնեցվել է «Պահպանիր մայրենի լեզուդ» հուշարձանը: Հուշարձանի վրա նշված են մի քանի լեզուներ իրենց այբուբենով: Ցավալիորեն՝ Ավստրալիայի ավելի քան 250 բնիկ լեզուները ներկայացված են մեկ խմբի տակ՝ «աբորիգեն» անվամբ:

Այսօր աշխարհում լեզուների ապագան անորոշ վիճակում է, քանի որ միջազգային մի քանի լեզուներ (անգլերեն, չինարեն, արաբերեն, իսպաներեն...) աստիճանաբար ստիպում են մարդկանց հրաժարվել սեփական մայրենի լեզվից: Հույս ունենանք, որ համացանցի և գլոբալ հաղորդակցության միջոցների շնորհիվ փոքրամասնական լեզուները կկարողանան գտնել գոյատևման իրենց ուղին՝ ի հեճուկս անբարենպաստ պայմանների:



Փետրվարի 21 ՔՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ


Միջին հաշվով յուրաքանչյուր մարդ քնած է անցկացնում իր կյանքի մեկ երրորդ մասը: Գիտնականները ապացուցել են, որ անքնությունը բացասաբար է ազդում մարդու կյանքի որակի վրա: Մշտապես անքուն մարդիկ նյարդային են, ինքնամփոփ և կառչում են մանրուքներից:



Բացի այդ՝ քնի կորստի հետևանքով վատանում է հիշողությունը, հնարավոր է դառնում տարբեր հիվանդությունների սրացումը:

Փետրվարի 12 ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ-80 (1935-2002)


Հրանտ Մաթևոսյանը հայ նորագույն արձակի նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա գրական ժառանգությունը՝ կերպարների մտածողությամբ ու հոգեբանությամբ, պատմության մշտաթթուն հիշողությամբ, խորապես ազգային է: Մաթևոսյանը միակն է հայ արձակագիրներից, ով ստացավ նախկին ԽՍՀՄ-ի պետական մրցանակ: Նրա գործերը թարգմանված են նաև աշխարհի տարբեր լեզուներով:



Փետրվարի 28 ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ-135 (1880-1972)

«Բնությունն արարում է մարդուն, որպեսզի հենց մարդու միջոցով տեսնի իրեն և հիանա իրենով: Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ, ուստի մահ գոյություն չունի»:

Մարտիրոս Սարյան



ՇՆՈՐՀԱՎՈՐ ԲԱՆԱԿԻ 23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Զինվորական բժիշկների հայկական ասոցիացիա»
հասարակական կազմակերպության նախագահ

Սիրելի բուժօժանայողներ, շնորհավորում եմ բոլորիդ Հայկական բանակի 23-րդ տարեդարձի կապակցությամբ: Զինվորական բժիշկները իրենց անուրանալի ավանդն ունեն ինչպես Արցախյան պատերազմի դժվարին հաղթանակի կերտման, այնպես էլ՝ խաղաղ բանակաշինության գործում: Նաև զինվորական բժիշկների անձնուրաց ու խիզախ ծառայության շնորհիվ ամրապնդվեց հայոց բանակի մարտունակությունը, բանակի բոլոր ձեռքբերումների մեջ դուք ունեք ձեր անգնահատելի ավանդը, որովետև առանց առողջ զինվորի ու սպայի, ենթասպայի ու գեներալի չենք կարող ունենալ ժամանակի ծանր մարտահրավերներին դիմակայելու ունակ բանակ: Դուք այսօր վաստակած հպարտությամբ եք տոնում Հայկական բանակի 23-րդ տարեդարձը: Բոլորիդ մաղթում եմ նորանոր հաղթանակներ, թող բանակային յուրաքանչյուր տարին բազմապատկի ձեր նվաճումներն ու փառքը:



ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ

Հայ ժողովրդի պատմությունը պայքարի ու պատերազմի պատմություն է: Անգամ ավանդությունն է փաստում, որ հայն իր գոյության իրավունքը կերտել է հայկյան աղեղից դիպուկ արձակած նետով: Եվ պատմությունը մեզ շիտակ դաս է տվել՝ երբ թուլացել է հայկյան աղեղը, երբ բթացել է Սասնա թուր-Կեծակին, երբ թուլացել է հայորդու բազուկը, թշնամու սուրն է կախվել մեր գլխին:

Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է, եթե չասենք, անկարելի՝ պատկերացնել մեկն առանց մյուսի:

90-ականներին կամավորական հայկական բանակը մեր անկախության ամենամեծ ձեռքբերումներից մեկն էր: Այդ տարիներին «բանակ» էր հայ հասարակության մտածողության մեջ այն գիտակցության հասունացումը, որ միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվտանգության երաշխիքը: «Բանակ» էին իրարից անկախ գործող կամավորական ջոկատները, որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից գեներալային հայթայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ անհավասար կռիվ մղելու հակառակորդի դեմ:

Բանակի ստեղծումն առանց ռազմական բժշկության անհնար է պատկերացնել: Ռազմական բժիշկը եզակի այն մասնագետներից է, ով երկու անգամ է երդվում՝ որպես բժիշկ և որպես զինվոր: Դա կրկնակի պատիվ է, բայց և կրկնակի պատասխանատվություն է պահանջում:

Այսօր մենք ունենք կայացած, տարածաշրջանի ամեն



նամարտունակ և ամենաազգային բանակը, որը մեր ազգային հպարտությունն է, և որի ուժի ու մարտունակության շնորհիվ տարիներ շարունակ պահպանվում է մեր երկրի խաղաղությունը: Եվ այդ բանակի ամենակարևոր մասն են կազմում ռազմական բժիշկները:

Սիրով շնորհավորում ենք բոլոր զինվորներին, սպաներին, ռազմական բժիշկներին, հրամանատարներին՝ Հայոց բանակի կազմավորման 23-րդ տարեդարձի կապակցությամբ, մաղթում առողջություն, տոկունություն, ամրություն, անփորձանք ծառայություն՝ ի փառս մեր հայրենիքի, իսկ համայն աշխարհին՝ խաղաղություն:

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԻ ԱՆԿՈՏՐՈՒՄ ՈԳԻՆ ՈՒ ՀՈՒԺԿՈՒ ԲԱԶՈՒԿԸ ԿԵՐՏԵՑԻՆ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

Հայը դեռ հազարամյակներ առաջ ճազմարվեստի մեջ իր նորամուծությունները մտցրեց. առաջին անգամ երկաթի կիրառությունը, երկաթյա զենք ու զրահի առաջին կիրառությունը մեր նախնիներին է պատկանում, առաջին հեծելազորի ստեղծման և ձին որպես ռազմի գործիք կիրառելու պատիվը նույնպես մեր նախնիներինն է:

Շատ տերություններ կորան, փոշիացան պատմության քառուղիներում, բայց հայոց բանակը մեր ազգի գոյության ու կենսունակության գրավականը եղավ:

Որտեղ ասես, որ այրուն չի թափել հայ զինվորը: Դեռ հեռավոր մ.թ.ա. 612-ին Բաբելոնն ու Մարաստանը իրենց թշնամի Նինվեդն կործանելու համար փնտրում էին հայ զինվորի աջակցությունը, և Պարույր Հայկազնը իր հեծյալներին առաջնորդեց Միջագետք՝ կործանելու Նինվեդն՝ հանուն իր ազգի գոյատևման:

Մ.թ.ա. 331-ին եվրոպական մայրցամաքից Ասիան նվաճելու եկած Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհամված անհաղթ բանակներին միակ լուրջ դիմադրությունը հայերը ցույց տվին Գավգամելայի դաշտում, երբ պարսկական բանակի ձախ թևը կազմող հայկական զնդերը կարողացան անսասան մնալ մակեդոնական փաղանգի առջև, և դարձյալ երաշխիքը եղան Հայաստանի անկախության:

Մ.թ.ա. II դարում հզոր Հռոմի հիմքերը ցնցած կարթագենցի Հաննիբալը հայ զինվորի բազկին միայն վստահեց և ապաստան գտավ Հայոց երկրում:

Տիգրան Մեծ արքան հայ հեծելազորի ուղքերի տակ փոշիացրեց ողջ արևելքը: Պարթևստան, Մարաստան, Օսրոյենե, Գամիրք, Ասորիք... Տասնյակի չափ մեծ ու փոքր երկրներ հպատակեցրեց, բազմից ջարդեց հռոմեական լեգեոնները և աստվածացվեց սեփական ժողովրդի կողմից:

62 թվականին հայոց զորքերը կարողացան ջարդել հռոմեական անպարտ բանակը: Հռոմը դեռ երկար պիտի հիշեր այդ նվաստացումը: Ոչ դրանից առաջ, ոչ էլ հետո, ոչ մի բանակի, ոչ մի զորավարի չի հաջողվել այդպես նվաստացնել Հռոմին: Եվ այդ հաղթանակով Տրդատ Ա Արշակունին նվաճեց Հայաստանում թագավորելու իրավունքը:

III դարում հստորով Գ Մեծ հայոց արքան հայոց հեծելազորով իրի ու սրի ճարակ դարձրեց Սասանյան դարձած Պարսկաստանը, և պարսից արքան միայն Անանկ Պարթևի դավաճանությամբ կարողացավ կանգնեցնել հայոց հաղթարշավը:

IV դարից Մամիկոնյան պայազատները ղեկավարեցին հայոց զինուժն ու

իրենց արյամբ օժեցին հայոց հաղթանակները: Վասակ Մամիկոնյան սպարապետը սասանեց պարսից և բյուզանդական զորությունը, Մուշեղ Մամիկոնյան զորավարը Ջիրավի դաշտում իր քաջությամբ ու մեծահոգությամբ արժանացավ անգամ իր ոսոխի՝ Շապուհի հիացմունքին, Մանվել Մամիկոնյան սպարապետն օր ծերության մահվան մահճում անիծում է իր բախտը, որ չի անհատակվում ռազմի դաշտում, այլ վախճանվում է անկողնում... Ահա հայ զինվորի, նվիրյալ իրամանատարի կերպարը:

VII դարից հայոց այրուծին կանգնեցրեց իսլամի կանաչ դրոշի շարժը դեպ եվրոպա: Եվ արաբական հորդաները, չկարողանալով տիրանալ հայոց հողին, դեպի եվրոպա իրենց ուղին հարթեցին՝ նվաճելով ողջ Հյուսիսային Աֆրիկան, որտեղից էլ անցնելով Ջիբրալթարը՝ ոտք դրեցին եվրոպական մայրցամաք:

Եվ IX դարում Բագրատունի սապետները սուր բարձրացրին իսլամի դեմ ու առաջնորդեցին հային դեպ ազատություն: Բագրատունյաց խոնարհված դրոշը փառքով պակեցին Ջաբարյան հսկաները, որ ազատության հաղթարշավ սկսելով Լոռուց՝ կարճ ժամանակում թոթափեցին ստրկության շղթաներն ու ծաղկով զարդարեցին իրենց լուսավոր ճակատները:

Անգամ օտար հողում՝ Կիլիկիո երկրում հայոց զինվորը հայրենիք կերտեց ու պետականություն ստեղծեց:

Եվ որտեղ ասես, որ հայ զինվորը իր կեցվածքով չարքագրեց մեր պատմությունը:

Բյուզանդիայում դարեդար ամենամարտունակը հենց Արմենիակների բանակաթեմն էր (Հռոմեական կայսրությունում վարչական միավոր): Հայրուրամյակներ շարունակ «արմեն» և «քաջ» բառերը հոմանիշեր էին: Եվ հենց հայ զինվորականության միջից էլած հայազն կայսրերը հոգեվարքից հանեցին Բյուզանդիան և հզորություն ու փառք բերին նրան:

Եգիպտոսում անգամ տասնյակ հազարավոր հայ զինվորականություն էր հաստատվել, և հայ ժողովրդի ցրված բեկորները Աֆրիկայի կիզիչ արևի տակ հավաքվելով՝ ապրելու և արարելու իրավունք վաստակեցին՝ ամբողջ մի դար իրենց ձեռքը վերցնելով Եգիպտոսի կառավարումը:

Հեռավոր Բուլղարիայում Սամուել Կոմսածագի որդիները բուլղար ժողովրդին առաջնորդեցին դեպի ազատություն ու իրենց ճակատները պակեցին թագով: Հայերը կռվեցին խաչակիր թալանչիների դեմ Գրյունվալդում, կռվեցին հանուն Ռուսաստանի...

Անպարտելի Նապոլեոնի բանակում ամենամանպարտելին հենց մամուլքների հայկական զորաջոկատն էր, որն առաջնորդում էր քաջ Ռոստոմը:

Ճակատագրի մեծ հեգնանքով ժողովուրդների մեծ ճակատամարտում՝ Աուստերլիցում, Նապոլեոնի բանակը պիտի առաջնորդեր նրա հավատարիմ օգնականն ու փեսան՝ Նեապոլի թագավոր Հովակիմ Սյուրատը՝ ծնունդով Արցախից: Նրա դեմ պիտի կանգներ կոմս Վալերյան Մադաթովը՝ դարձյալ ծնունդով Արցախից: Եվ երկու արցախցիներ պիտի վճռեին աշխարհի ճակատագիրը...

Եվ բուն հայոց երկրում հայի ոգին արթնացավ ու հայի բազուկը սկսեց գործել դարձյալ Արցախ աշխարհում: Դավիթ Բեկի քաջերը առաջին կարապետները եղան, որ սուր բարձրացրին օտարի լուծը թոթափելու համար: Եվ ամեն ինչ սկսվեց նորից. Սասունում, Վասպուրականում, Տարոնում...

Եվ հայի հուժկու բազուկը դարձյալ իջավ Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում: Ու հայը վերջապես զարթնեց նիրհից, զենք վերցրեց, զինվոր գրվեց ու հաղթեց:

1990-ականներին յուրաքանչյուր հայի սրտում բոցավառվում էր Հայաստանը ազատ տեսնելու ցանկությունը: 1991-ի սեպտեմբերի 21-ին հռչակվեց ՀՀ-ի անկախությունը, և ընթացք ստացավ ՁՈւ ստեղծելու գործընթացը:

Բանակն է այն ազգային հենքը, որի շնորհիվ պետությունը կարող է բարգավաճել և իր բճօրրանում ապրել խաղաղության ներքո:

Բազմաթիվ են այն հերոսները, որոնց անունները դարեդար կինչեն մեր շուրթերին, որոնց անունները բյուր և բազմազան են: Անուններ, որոնք անմահության գնացող ազգի ազատության պոռթկումն ու զարկն էին: Անուններ, որոնք չխնայեցին իրենց կյանքը՝ հանուն գալիք սերունդների: Եկեք այսօր բոլորս ծունկ չոքենք այն անմեղ հոգիների առջև, որոնք, հանուն այս օրվա, զոհեցին իրենց կյանքը: Եկեք ուխտենք սուրբ պահել նրանց հիշատակը, շարունակել նրանց սկսածը, միշտ վառ պահել հայ ազգի պատիվը, կռվել՝ միշտ հաղթելու հավատով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՅԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ

Գաղտնիք չէ, որ բժշկի մասնագիտության մեջ տեսական գիտելիքներին զուգահեռ պետք է ընդգծված լինեն նաև գործնական հմտությունները: Տասնամյակներ շարունակ բժշկական կրթության գլխավոր գիծը եղել է տեսական լայնածավալ գիտելիքներով ուսանողներին կրթելը, երկրորդ գործոնը՝ գործնական հմտություններին և ունակություններին տիրապետելը, փոքր-ինչ հետ է մնացել առաջինից:

Փաստը մտահոգում էր և՛ համալսարանին, և՛ մասնագիտական ամբիոններին, և՛ առաջին հերթին, վաղվա բժիշկներին՝ ուսանողներին, հատկապես արտասահմանցի, քանի որ վերջիններս իրենց երկրներում մասնագիտական քննությունների հանձնման պարագայում փայլում էին տեսական գիտելիքների մակարդակով, սակայն անբավարար էր զնահատվում նրանց գործնական ունակությունների տիրապետման աստիճանը:

Պատճառը, թերևս, կարելի է համարել այն հանգամանքը, որ հիվանդներն առանձնակի բարեհաճություն չեն ցուցաբերում իրենց մոտեցող ուսանողների հանդեպ. հանգամանք, որն էլ իր հերթին ծնում է հետևանքը:

Քաղաքակիրթ աշխարհը վաղուց հայտնագործել է կրթական համակարգի այս բացը լրացնելու միջոցը՝ օգտագործելով տարբեր վարժասարքեր:

Վերջին տասնամյակում բժշկական համալսարանում նույնպես սկսեցին կրթական համակարգում կիրառվել նման սարքեր: Սակայն՝ ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ դրանք չափազանց պրիմիտիվ, մեխանիկական սարքավորումներ էին, որոնք էապես տարբերվում էին այն վարժասարքերից՝ մուլյաժներից, որոնք բոլորովին վերջերս ձեռք են բերվել համալսարանի կողմից և տեղադրվել ուսումնական

սինուլյացիոն կենտրոնում:

Կենտրոնի բացմանը մեծ անհամբերությամբ էին սպասում և՛ կլինիցիստ դասախոսները, և՛ ուսանողները՝ վստահ, որ այն կօգնի վերացնել գործնական հմտությունների ուղղությամբ մեր շրջանավարտների փորձի պակասը:

Սինուլյացիոն կենտրոնը ներառում է չորս հիմնական ուղղություններ՝ կլինիկական հմտություններ, վերակենդանացում, վիրաբուժություն և մանկաբարձություն-գինեկոլոգիա: Կենտրոնը համալրված է համապատասխան մուլյաժներով, վարժասարքերով և կրթական ծրագրեր պարունակող համակարգիչներով: ԵՊԲՀ-ի կողմից վերանայվել են կրթական ծրագրերը, իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:

Սինուլյացիոն ուսուցման լիարժեք ներդրումը ԵՊԲՀ-



ում նախատեսվում է 2015 թվականի փետրվարից: Պատասխանատուների հավաստմամբ՝ անհրաժեշտության դեպքում, ծրագրի ավարտից հետո կստեղծվի նաև առանձին դասընթաց՝ հեռավար ուսուցման ձևով, որը համալսարանի վեբկայքի միջոցով հասանելի կլինի այլ շահառուների և: Դասախոսների և կենտրոնի աշխատակիցների համար նախատեսվում է պարբերաբար կազմակերպել հատուկ վերապատրաստման դասընթացներ՝ այս ոլորտում միջազգային փորձի ներդրման և բարեփոխումների լավագույն արդյունքն ապահովելու համար:

Համալսարանական թիվ 1 «Չերացի» կլինիկայում տեղակայված սինուլյացիոն կենտրոնի հանդիսավոր և սպասված բացմանը իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ կրթու-



ՄԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆԸ

թյան և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Աժ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբոյանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը և բարձրաստիճան այլ հյուրեր, ովքեր շրջայց կատարեցին թիվ 1 համալսարանական կլինիկական հիվանդանոցի նորաբաց կենտրոնում՝ ծանոթանալով Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում հիմնված կենտրոնի հնարավորություններին:

Օգտագործելով առիթը՝ հենց սիմուլյացիոն կենտրոնում կրթության և գիտության նախարարը ծանոթացրեց Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի ընթացքին ու գործունեության ուղղություններին՝ նշելով, որ նորաբաց սիմուլյացիոն կենտրոնի միջոցով երևանի պետական բժշկական համալսարանի կրթական համակարգում ներդրվում է բժշկական կրթության նոր մեթոդ՝ սիմուլյացիոն ուսուցում: Այսպիսի նորարարական կրթական մեթոդի ներմուծումը բժշկական կրթության թե՛ բուհական, թե՛ հետբուհական, ինչպես նաև շարունակական կրթության փուլերում թույլ է տալիս զարգացնել ուսանողների գործնական հմտությունները և պակասեցնել բժշկական սխալների քանակը մասնագիտական գործունեության ընթացքում: Նորարարական ծրագիրը, ընդհանուր առմամբ, ուղղված է բժշկական կրթության որակի և արդյունավետության էական բարելավմանը:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ





«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ը ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԵՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

Երևանի Մ.Յերազու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ «Երևանի պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի տարեկան ընթացիկ, ըստ էության, վերջին նիստը, որը վարեց կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Օրակարգի առաջին հարցի առնչությամբ համալսարանի ղեկավար Միքայել Նարինյանի ամփոփ՝ ըստ բնագավառների, ներկայացրեց ուսումնական գործընթացով, բուհական գիտության կազմակերպմամբ զբաղվող օղակների, հետբուհական կրթության, տնտեսական և այլ կառույցների գործունեության արդյունքում արձանագրված ձեռքբերումները, ընդգծեց դեռևս շարունակվող գործընթացների ավարտին սպասվելիք հաջողությունները և նախանշեց առաջիկայում իրականացվելիք ծրագրերը:

Նա հատկապես կարևորեց ԲՈՒՀ-ի ձեռքբերումներից մեկը. 2014 թվականի հունիսի 26-ին ՀՀ կառավարության որոշմամբ պետական նմուշի ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ձևում կատարված փոփոխություն

ներ, ըստ որի՝ «օրդինատոր», «դեղագետ», «հետազոտող» և «աստիճան» բառերը համապատասխանաբար փոխարինվել են «բժիշկ-մասնագետ», «մասնագետ», «դեղագետ-մասնագետ» և «որակավորում» բառերով:

Անդրադառնալով կրթական համակարգում տեխնիկական միջոցների ընդգրկման կարևորությանը հատկապես բժշկական կրթության պարագայում՝ ղեկավարը կարևորեց սիմուլյացիոն կենտրոնի չափազանց մեծ դերը, որի բացումը տեղի ունեցավ վերջերս: Նա տեղեկացրեց ներկաներին, որ սիմուլյացիոն ուսուցման լիարժեք ներդրումը ԵՊԲՀ-ում նախատեսվում է 2015 թվականի փետրվարից:

Բանախոսը խոսեց նաև գիտական ոլորտի ձեռքբերումների և անելիքների, արտասահմանցի ուսանողների հետ տարվող աշխատանքի և նրանց թվի մասին (1.498 օտարերկրացի ուսանող՝ աշխարհի 24 երկրից), նաև տեղեկացրեց, որ հանրակացարանի խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի ավելացնել այդ թիվը:

Հաշվետվության մեջ մեծ ընդգրկմամբ ներկայացվեցին միջազգային կրթական ծրագրերին ԵՊԲՀ-ի մաս-

նակցությանը և կադրային քաղաքականությանն առնչվող հարցեր:

Ձեկուցման շրջանակներում բավականին ընդարձակ հղումներ արվեցին համալսարանի փաստացի ֆինանսական հոսքերին, մանրամասն վերլուծվեցին ծախսերը, մուտքերը, տնտեսումները, ներկայացվեցին կատարված վերանորոգման աշխատանքները:

Ամփոփելով ղեկավարի հաշվետվության քննարկումը՝ կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն իր ելույթում նշեց. «Բոլորիս անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ԵՊԲՀ ղեկավար Միքայել Նարինյանին՝ հանգամանակից և հետաքրքիր զեկույցի համար: Նշեմ, որ Երևանի պետական համալսարանն այսուհետև իր կարգավիճակով հիմնադրամ է, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ ԲՈՒՀ-ի աշխատակիցներին և ուսանողությանը, քանի որ սա մեծ ինքնավարության հնարավորություն է տալիս՝ և՛ ակադեմիական, և՛ վարչական, և՛ ֆինանսատնտեսական առումներով: Բայց սա նաև պատասխանատվություն է, քանի որ պետական հաստատությունից ԲՈՒՀ-ը վերակազմակերպվում է հանրային, ինչը նշանակում է, որ ԲՈՒՀ-ի ազա-

տությունը պետք է զուգորդվի պատասխանատվության հետ: Պրն. Նարիմանյան, դիմելով ձեզ, որպես ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ հիմնադրամ դառնալու պարագայում հանձնարարում եմ հնարավորինս արագ կազմակերպել կառավարման հոգաբարձուների խորհրդում 25 տոկոս ներկայացուցիչների ընտրության հարցը ԲՈւՅ-ի կողմից, քանի որ կառավարությունն ու նախարարությունը հակված են, որպեսզի կառավարման մարմինների կազմավորումները շատ արագ կազմակերպվեն՝ հաստատության բնականոն ընթացքն ապահովելու համար: Խնդրում եմ, որ օրենքին համապատասխան ընթացակարգով ընտրեք ձեր ներկայացուցիչներին և ներկայացնեք նախարարություն, որպեսզի վարչապետի որոշման նախագծում լինի նաև ձեր մասը, նույն խնդրանքս նաև ուսանողական խորհրդարանին՝ դուք ունեք ձեր լիազորությունները՝ 25 տոկոս ձայնի շրջանակներում ընտրել ձեր ներկայացուցիչներին: Խնդրում եմ ընտրությունը կազմակերպել օրենքին համապատասխան՝ ֆակուլտետներով, առաջադրումներով, ընդհանուր ժողովով, հաստատումով և արդյունքները ուղիղ նամակով հասցնել կրթության և գիտության նախարարին, որից հետո կգումարվի նիստ, կընտրվի կառավարման խորհրդի նախագահ, և կհայտարարվի ռեկտորի մրցույթ: Խնդրում եմ շատ արագ կազմակերպել այս ամենը, քանի որ ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակում լինելը ինձ, ինչպես նաև ռեկտորին, այնքան էլ դուր չի գալիս:

Իհարկե՝ լինելու է բաց մրցույթ, բայց պետական լիազոր մարմնի և կառավարության կողմից կան նախընտրություններ: Բնականաբար, երբ առաջադրվեն թեկնածուներ, այն ժամանակ մեր կարծիքը պարզ կդառնա բոլորին: Ցանկանում եմ ռեկտորին ևս մեկ հանձնարարական տալ խորհրդի, ոչ թե նախարարության կողմից. հիմնադրամ կարգավիճակը տալիս է ֆինանսատնտեսական ազատություն, հաջորդ մեր նիստին խնդրում եմ ներկայացնել ձեր ռազմավարությունը, թե ԲՈւՅ-ն ինչպե՞ս է

օգտվելու այս նոր կարգավիճակից, ի՞նչ գերակա ռազմավարական ուղղություններ եք տեսնում, որոնց հիման վրա կարող եք բարելավել ձեր ֆինանսական վիճակը՝ մատուցելով նոր ծառայություններ:

Ինչպե՞ս է կապիտալիզացվելու այս որոշումը, ի՞նչ բժշկական ուղղություններով պետք է հիմնադրամ կարգավիճակում ավելի բարվոք տնտեսական ֆոն ստեղծվի: Ցանկանում եմ խոսել նաև ակադեմիական խնդիրների մասին. ինչպես ներկայացրեց պրոֆ. Մ. Նարիմանյանը, արվել են ծրագրային փոփոխություններ: Գաղտնիք չէ, որ խնդիրները պետք է պարբերաբար քննարկվեն նաև նախարարությունում՝ ԲՈւՅ-ի ղեկավարության մասնակցությամբ: Մենք քննարկել ենք նաև ծրագրային փոփոխության հարցը, և խնդրում եմ հետևողական լինել, որպեսզի ուսումնական ծրագրերը բերվեն վերջնական տեսքի՝ համաձայն միջազգային ստանդարտների:

Մյուս հարցը քննությունների ընթացակարգն է. խնդրում եմ շարունակել աշխատել այնպես, որ քննական գործընթացը չտուժի այդ նիստերի հետ կապված:

Բժշկական ծառայությունների գծով շնորհակալություն եմ հայտնում առողջապահության նախարարությանը, մենք խնդիրներ չենք ունեցել այս բնագավառում, և կարծում եմ՝ հիվանդանոցները պետք է ավելի շատ պետական պատվեր ստանան:

Արտասահմանցի ուսանողների հետ կապված ունենք սահմանափակում: Շատ լավ է, որ ձեր վարկային պատմությունը դառնում է բարվոք և մոտ ապագայում, կարծես թե, կազատվեք պարտքերից, ես առաջարկում եմ հետևյալը. եթե ԲՈւՅ-ը կունենա գումար, կառավարությունը պատրաստ է դիտարկել հնարավորություն ԲՈւՅ-ին որևէ շենք տրամադրելու, և եթե ԲՈւՅ-ը իր ուժերով այն վերակառուցի հանրակացարանի, կարող ենք այդ փոխշահավետ գործարքն իրականացնել՝ շենքի տարածքը պետության, իսկ վերանորոգման և կահավորման ֆինանսավորումը՝ ԲՈւՅ-ի կողմից: Այդ դեպքում այս հարցը գոնե մասնակիորեն

կարող ենք լուծել:

Օրերս հրապարակվելու են մեր ԲՈւՅ-երի ազգային վարկանիշավորման արդյունքները: Հայաստանում անցյալ տարի մենք ներդրեցինք ԲՈւՅ-ի վարկանիշավորման պիլոտային ծրագիրը՝ ազգային վարկանիշը, բժշկական համալսարանի դիրքը ես գիտեմ, սակայն իրավունք չունեմ հիմա հայտնելու: Սակայն պետք է նշեմ, որ այն բավականին լավ դիրքում է գտնվում: Այստեղ իրականացվեց «երազմուս Մուհդուս» ծրագրի շնորհանդեսը, ցանկանում եմ տեսնել ԲՈւՅ-ի ողջ կոլեկտիվի հետևողական աշխատանքը, որպեսզի եվրոպական միության ծրագրային ֆոնդերից մենք կարողանանք լավագույնս օգտվել: Շարունակեք այդ բանական ծախսերի քաղաքականությունը՝ հարկ եղած դեպքում չխորշելով ավելորդ աշխատուժից:

Բժշկական համալսարանի ողջ աշխատակազմը հագեցված է, և մեան հսկայական աշխատավարձային ֆոնդ որևէ ԲՈւՅ Հայաստանում չունի: Մենք ունենք շատ կրկնվող ամբիոններ, ունենք հարակից ամբիոններ: Ես բոլոր դասախոսներին հարգում եմ, բայց, ցավոք, մենք պետք է զննեք խոշորացման ճանապարհով և պետք է ստեղծենք խոշոր ամբիոններ այնտեղ, որտեղ դա հնարավոր է անել:

Հավատարմագրման հետ կապված. հունվարին ազգային գործակալության օրակարգում կորվի բժշկական համալսարանի ազգային հավատարմագրման հարցը: Չեմ ցանկանում կանխորոշել արդյունքները, սակայն կարող եմ ենթադրել, որ եթե բժշկական համալսարանը պոզիտիվ լինի այս գործընթացում, մենք շանսեր կունենանք դառնալ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ԲՈւՅ-երից առաջիններից մեկը, որը նույնպես շատ կարևոր է»:

Այնուհետև կառավարման խորհուրդը քվեարկությամբ հավանություն տվեց ԵՊԲՅ-ում 2014 թվականին կատարված աշխատանքների մասին Սիքայել Նարիմանյանի հաշվետվությանը:

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԵՑ ԵՎ ՎԵՐԱՆՎԱՆՎԵՑ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ինչպես գիտենք՝ 2014 թվականի տարեվերջին կառավարությունը կրթության և գիտության նախարարության առաջարկով որոշում է ընդունել Երևանի պետական համալսարան և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպել հիմնադրամների:

Հիմք ընդունելով հիմնադրամի վերակազմավորվելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, ինչպես նաև տարբեր առիթներով այս հարցի մասին պատկան մարմինների ներկայացուցիչների փաստարկները՝ փորձենք հասկանալ՝ ինչու է արվել այս փոփոխությունը, արդյո՞ք այն իր հիմքում ունի նախադեպի տարբերակ:

Պարզվում է հիմնադրամ դառնալու ճանապարհը Հանրապետությունում արդեն անցել են Հայաստանի ազգային ազրարային համալսարանը՝ երեք տարի առաջ, Հայաստանի ճարտարապետաշինարարական և ճարտարագիտական (պոլիտեխնիկ) համալսարանները:

Պետական համալսարանը և բժշկական համալսարանը չորրորդ և հինգերորդ պետական ԲՈւՀ-երն են, որոնց շնորհիվ նման կարգավիճակ:

Եվրոպական կրթական տարածքում կարևորագույն ցուցանիշ է, թե որքանով է ԲՈւՀ-ը ինքնավար իր ակադեմիական դրսևորումների մեջ և որքանով է կարողանում իրականացնել այն դերակատարությունը, որ պետք է ունենային պետական ԲՈւՀ-երը՝ լինելով հանրային հաստատություններ:

Ո՞րն է մինչ այս մեր ունեցած և սպասվելիք կարգավիճակների տարբերությունը:

Պատահական չէ, որ ԲՈւՀ-երը դառնում են հանրային համալսարաններ, և «Հիմնադրամ» կարգավիճակն է տալիս նրանց այդ հնարավորությունը:

Կառավարությունը հիմնադրում է հաստատություն, որը շատ ավելի ինքնուրույն է աշխատում և իր ճակատագիրը տնօրինում, քան նախկինում:

ԲՈւՀ-երի ազատականացման տենդենցը, որը հարիր է մեզ, որպես նաև եվրոպական կրթական տարածքում իր դիրքն ամրապնդած երկրի, հետևանք է նոր քաղաքականությանը՝ ընդլայնել ԲՈւՀ-երի ազատությունը:

Իսկ ի՞նչ է նշանակում բուհական ազատություն:

Տարբեր հետազոտությունների արդյունքում՝ հիմնականում միջազգային փորձագետների օգնությամբ, չափվեց մեր բուհական ազատությունը, թե ի՞նչ աստիճանի ենք մենք հասել այդ ուղղությամբ:

Կան հիմնական 4 ցուցանիշեր, որոնցով չափվում է ԲՈւՀ-երի ազատությունը:

Առաջինը վարչական ցուցանիշն է՝ որքանով է ԲՈւՀ-ը ազատ ինքնուրույն ընդունելու պրոֆեսորադասախոսական կազմին:

Երկրորդը կառավարչական ցուցանիշն է՝ ինչպե՞ս է կառավարվում ԲՈւՀ-ը, ո՞վ է կառավարման մարմնում ներկայացված, ինչպե՞ս է ընտրվում ռեկտորը և այլն:

Երրորդը ակադեմիական ցուցանիշն է՝ որքանով է ԲՈւՀ-ն ինքնուրույն կրթական ծրագրեր ձևավորելիս, ինչպե՞ս է ԲՈւՀ-ը որոշում, թե ինչ մասնագիտություն պետք է դասավանդել, ամբիոն բացել և այլն:

Չորրորդը ցուցանիշը ֆինանսական ազատությունն է՝ որքանով է ԲՈւՀ-ն ինքնուրույն իր ֆինանսական գործունեության մեջ:

Հատկապես վերջինիս առումով «Հիմնադրամ» կարգավիճակը ընդունում է խիստ ընդգծված ազատականություն:

ԲՈւՀ-երը շատ ավելի ազատ կլինեն գնումների գործընթացից մինչև գիտելիքի առևտրայնացումը:

Ստացվում է, որ մեր ֆինանսական կարողությունների տերը մենք

ենք և այն մենք ենք վերահսկելու: Հիմնադրամն այդ հնարավորությունն է հստակեցնում:

Այն, որ մենք կարիք ունենք հետևողականորեն ընդլայնել բուհական ազատությունները, մեր ակադեմիական շրջանակների կարծիքն է: Այն, որ պետությունը պատրաստ է դրան գնալ, դա կառավարության մոտեցումն է:

Հասկանալի է, որ այս փոփոխությունը կատարվում է քայլ առ քայլ, նախ՝ մի քանի ԲՈւՀ-ում, ինչպես ընդունված է ասել՝ պիլոտային տարբերակով:

Պարզվում է՝ այն բավականին արդյունավետ է աշխատում: Ազրարային համալսարանի օրինակը չափազանց խոսում է. այստեղ արդեն հիմնադրել են արտադրամասեր՝ կաթ, միս են արտադրում՝ որպես ուսումնասիրտադրական բազաներ:

Հիմնադրամը նրանց լրացուցիչ փող աշխատելու ձևուն հնարավորություն է տվել:

ՀՀ ԿԳ նախարարի հետ հարցազրույցներից մեկի ժամանակ լրագրողը ներկայացրեց հասարակության մեջ տարածված այն կարծիքը, թե ԲՈւՀ-երը հապճեպ հիմնադրամ են դարձնում, նպատակ ունենալով կանգնեցնել ԲՈւՀ-երից երիտասարդ մասնագետների հոսքը դեպի մասնավոր հիմնարկներ՝ կապված երիտասարդ կադրերի կուտակային կենսաթոշակի պարտադիր ներդրումների հետ:

Չափազանց հետաքրքիր հնչեց ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի պատասխանը, որը և մեջբերում են. «Սա ընդհանուրից գալիս է մասնավոր դեպքերին: Այսինքն մենք գնում էինք այդ ճանապարհով մինչև կուտակայինի հետ կապված խնդիրների առաջացումը: 2011-ին, երբ ազրարային համալսարանը դարձավ հիմնադրամ, կուտակայինի խնդիր չկար: Չկար նման խնդիր նաև ճարտարապետաշինարարական համալսարանի պարագայում: Այս ընթացքում մեր քաղաքականությանը

զուգահեռ առաջացավ նոր մարտահրավեր, որը կառավարությունն ընդունեց որպես այդպիսին: Վարչապետը հստակ հանձնարարականներ ձևակերպեց ֆինանսական գերատեսչությանը և մեզ՝ տալ լուծումներ:

Ո՞րն էր խնդիրը.

Մասնավոր հատվածից մենք ունենք բուհական համակարգում աշխատող երիտասարդ դասախոսներ: Դա էր պատճառը, որ ես քանիցս հրապարակավ դիմեցի այդ դասախոսներին՝ խնդրելով չազատվել աշխատանքից, քանի որ մենք կգտնենք լուծումներ: Խոսքն այն երիտասարդների մասին է, ովքեր իրենց փաստացի դասավանդմամբ ԲՈւՅ-երում ապահովում են աշխատաշուկայի հետ կապը: Օրինակ, եթե տեղեկատվական և հաղորդակցական (ՏՅՏ) ոլորտի մասնավոր ընկերությունների երիտասարդ դասախոսները դասավանդում են պետական ԲՈւՅ-երում, դա նշանակում է, որ այդ կրթական ծառայությունն ավելի է միտված աշխատաշուկային, ավելի կիրառական կարողություններ է ձևավորում, և նրանք գիտեն՝ ի՞նչ է պետք շուկային և դա են դասավանդում: Մենք պարզեցինք, որ նման խնդիր կար հետևյալ 4 հիմնական ԲՈւՅ-երում՝ պոլիտեխնիկում, ճարտարապետաշինարարական համալսարանում, որտեղ շատ էին նման դասախոսները: Սակայն առաջատարը Երևանի պետական բժշկական և Երևանի պետական համալսարաններն էին, որտեղ դեղագործներ, ատամնաբույժներ, ՏՅՏ ոլորտի մասնագետներ, բանկային ոլորտի մասնագետներ շատ կային: Քանզի պոլիտեխնիկն ու ճարտարապետաշինարարականն արդեն վերածվել էին հիմնադրամի, այս խնդիրը կարգավորվում էր օրենքով: Բժշկականի և պետական համալսարանի պարագայում մենք ունեինք այս հարցը շատ արագ լուծելու խնդիր...»:

Քննարկվող հարցի առնչությամբ գլխավոր փոփոխություններից մեկը կկրի կառավարման համակարգը, որը թեև արտաքուստ նման է ՊՈԱԿ-ին, բայց կա սկզբունքային տարբերություն: Այն պահից, երբ պետությունը հիմնադրեց հիմնադրամը և ձևավորեց հոգաբարձուների խորհուրդը, այդ պահից այն դառնում է

շատ ինքնուրույն, ինքնավար հաստատություն և կառավարման մարմին:

Ինչպե՞ս է ձևավորվելու կառավարման՝ հոգաբարձուների խորհուրդը.

25 տոկոսը լինելու է կառավարության քվտան, 25-ը՝ կրթության և գիտության նախարարության, 25-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին, իսկ մնացյալ 25-ը բաժին է հասնելու ուսանողներին: Կառավարությունը և նախարարությունն իրենց քվտայի մեջ հատուկ տեղ են տալիս տվյալ բնագավառի մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, ովքեր պետք է աշխատաշուկայի հետ կապը ապահովեն:

Պաշտոնավարման հետ կապված մեկ այլ տարբերություն ՊՈԱԿ-ից **չկա տարիքային սահմանափակում:**

Հիմնադրամի պարագայում պետությունը չի տարբերակում հիմնադրամը պետական է, թե ոչ պետական, որի հիմնադիրը կարող է լինել յուրաքանչյուր ոք: Իրենց ազատությունների մեջ այդ հիմնադրամները նույն իրավունքներն ունեն:

Իսկ սեփականության նկատմամբ իրավունքը հետևյալն է. պետությունը անհատույց, անժամկետ տրամադրում է ԲՈւՅ հիմնադրամներին այն շենք-շինությունները, որտեղ նրանք աշխատում են, որոնք պետական են՝ օգտագործելու իր կանոնադրական նպատակների համար: Կան ԲՈւՅ-եր, և օրենսդրությունը դա թույլ է տալիս, որոնք ստեղծում են նաև իրենց սեփականությունը, որը ոչ թե պետությունն է ժամանակին տվել, այլ ԲՈւՅ-ը գումար է աշխատել և կառուցել է, դիցուք՝ նոր մասնաշենք, որը արդեն ԲՈւՅ-ինն է, ոչ թե պետությանը: Ստացվում է, որ մոտեցումը շատ հստակ է՝ ԲՈւՅ-երը պետք է դառնան հանրային հաստատություններ:

Ի դեպ՝ պետության կողմից անվճար տեղերի բաշխման հարց չի առաջանում: ՊՈԱԿ-ներում նախկինում պարզ և հստակ ամրագրվում էր, թե որ ԲՈւՅ-ը ինչքան տեղ պետք է ստանա:

Նույն կերպ է լինելու նաև հիմնադրամի դեպքում: Կառավարությունն իր լիազորությունների շրջանակում բաշխելու է պետական պատվերը:

Որպեսզի ավելի ամբողջական լինի տեղեկատվությունը, նշենք, որ Հայաստանում վաղուց էին գործում հիմնադրամ ԲՈւՅ-եր: Օրինակ, ամերիկյան համալսարանն իր կարգավիճակով հիմնադրամ է իր հիմնադրման պահից: Ֆրանսիական համալսարանն իր կարգավիճակով նույնպես հիմնադրամ է, և մենք տեսնում ենք, որ այդ ԲՈւՅ-երը կարողանում են ավելի ազատ լինել: Եվ սա է եվրոպական կրթական տարածքի ոգին ու տառը: Եվրոպայում չկա պետական ԲՈւՅ հասկացություն մեր ընկալումների շրջանակում, դրանք հանրային ԲՈւՅ-եր են:

Նոր կարգավիճակում ԲՈւՅ-ը պետք է վճարովի ծառայություն մատուցի ոչ միայն կրթության բնագավառում ուսման վարձերը գանձելով, այլև պետք է ունենա հնարավորություն՝ գիտելիքը առևտրայնացնելու: Բժշկական համալսարանն անսպառ տեղ ունի առևտրայնացնելու իր գիտելիքը:

Այսինքն՝ մեր ԲՈւՅ-երը «Հիմնադրամ» կարգավիճակում կունենան ավելի մեծ հնարավորություններ գումար աշխատելու, ձեռներեցությամբ, համադրելով կրթությունը, գիտությունը և արտադրությունը՝ ստանալ այն արդյունքը, որին իրենք ցանկանում են հասնել:

Նոր կարգավիճակի մասին առավել հստակ և ամբողջական պատկերացում կազմելու համար որոշեցինք տպագրել Հայաստանի Հանրապետության կառավարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու մասին որոշումը, ավելացնելով, որ որոշման կետերի մի մասը կատարվել է, իսկ մյուսները ընթացքի մեջ են:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԵՐԱԿԱԶՄԱԿՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 273.210.03230) վերակազմավորել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան):

2. Հաստատել համալսարանի կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

4. Հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար (այսուհետ՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար) նշանակել Միքայել Նարինյանյանին:

5. Առաջարկել համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ սույն որոշման N2 հավելվածում նշված անշարժ գույքը հետ վերցնել և դրանք թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը:

7. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Երևան քաղաքի Դ. Անհաղթի 10 հասցեում գտնվող՝ 255188.9 հազ. դրամ սկզբնական արժեքով և 4044 քառ. մետր մակերեսով 5-րդ մասնաշենքը (այդ թվում՝ 94.7 քառ. մետր նկուղով), 190298.6 հազ. դրամ սկզբնական արժեքով և 3947.5 քառ. մետր մակերեսով 6-րդ մասնաշենքը, 0.69803 հեկտար մակերեսով հողատարածքը, Երևան քաղաքի Ներսիսյան 3 հասցեում գտնվող 782070.6 հազ. դրամ սկզբնական արժեքով և 2010.7 քառ. մետր ուսումնական մասնաշենքը հետ վերցնել և հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող՝ սույն որոշման N3 հավելվածում նշված գույքն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համալսարանին:

9. Հայաստանի Հանրապետության կառավարությանն

առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերում նշված գործընթացի ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, համալսարանի հետ կնքել N3 հավելվածում նշված գույքի անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման պայմանագիր և համաձայնագիր՝ կատարելով սույն որոշումից բխող փոփոխություններ՝ դրանում նախատեսելով դրույթ այն մասին, որ պայմանագիրը կարող է լուծվել հիմնադրի կողմից՝ դրա մասին գրավոր ծանուցելով համալսարանին, պայմանագրի նոտարական վավերացման, պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով համալսարանի միջոցների հաշվին:

10. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

ա. ապահովել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը,

բ. հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին փոխանցման ակտը:

2) հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում՝

ա. Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը,

բ. ապահովել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը սեփականության իրավունքով համալսարանին փոխանցելու հանձնման-ընդունման գործընթացը:

11. Սահմանել, որ համալսարանը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է, և նրան են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՈՎԻԿ ԱՐԱՐԱՄՅԱՆ
Հայաստանի Հանրապետության վարչապետ
2014թ. դեկտեմբերի 17

Իմացե՛ք, տարածե՛ք, օգտվե՛ք



Սիրելի՛ ուսանողներ, ինձ հաճախ եք դիմում ուսանողական զեղչերի հետ կապված հարցերով: Ստորև ներկայացնում եմ այդ հարցը կարգավորող օրենսդրությունից մի հատված: Օրենքն ընդունվել է մեր առաջարկությամբ այս տարի: Բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տաս տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

- 1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
- 2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս,
- 3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանող-

- ներին՝ առնվազն 50 տոկոս,
 - 4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս,
 - 5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
 - 6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
 - 7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
 - 8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության զնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս,
 - 9) այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին, որը կարող է սահմանել բարձրագույն ուսումնական հաստատությունը:
- Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ովքեր ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբե-

րությամբ:

Սույն հոդվածով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական զնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության
նախարար



ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ



ստեղծված սարքավորումները հնարավորություն կտան բնակչությանը նաև սահմանել ինքնահսկողություն որոշ հիվանդությունների դեպքում: Սույն պայմանագիրը կհստակեցնի մեր համագործակցությունը նման սարքավորումների ստեղծման, փորձարկման և շահագործման ոլորտում և հնարավորություն կտա համատեղ լուծումներ գտնել ոչ միայն վերոնշյալ խնդիրների համար, այլև որոշ հիվանդությունների կանխարգելման և վաղ ախտորոշման գործում, ինչն այսօր առաջնային խնդիր է: Հուսով ենք, որ մոտ ապագայում ՀՀ առաջնային բուժօգնու-



Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում տարեվերջին հյուրընկալվել էր Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պատվիրակությունը, որը գլխավորում էին ՀՊԾՀ ռեկտորի պաշտոնակատար Հովհաննես Թոքմաջյանը և ակադեմիկոս Յուրի Սարգսյանը: Հանդիպման նպատակն էր երկու ԲՈՒՀ-երի միջև համատեղ գործունեության պայմանագրի ստորագրումը:

Ողջունելով հյուրերին ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարիմանյանը շնորհակալություն հայտնեց ՀՊԾՀ ղեկավարությանը համագործակցության համար և նշեց, որ ԲՈՒՀ-երի կոնսորցիում կոչվող երևույթն այսօր ստանում է գործնական և գիտական հիմք՝ երկու կողմերի միջև կնքվելիք համատեղ գործունեության պայմանագրի տեսքով. «Այսօր Հայաստանի առաջնային բուժօգնությունը և ընտանեկան բժշկու-

թյունը կհամապատասխանի միջազգային ստանդարտներին, և Հայաստանի ինժեներական միտքը կկիրառվի նաև սեփական բժշկական կարիքները հոգալու համար»:

ՀՊԾՀ ռեկտորի պաշտոնակատար Հովհաննես Թոքմաջյանը ևս իր խոսքում ընդգծեց կնքվելիք պայմանագրի կարևորությունը և հանդգնունք հայտնեց, որ այն հնարավորություն կտա լուծել բազմաթիվ խնդիրներ. «Մեր համալսարանի գիտնականների կողմից ստեղծված բժշկական սարքավորումները չունեն իրենց նախատիպը, և այս համագործակցությունը նախատեսում է հեռանկար ունեցող գործընթաց, որը նաև նոր համատեղ գիտական աշխատանքների սկիզբ կլինի»:

Հանդիպման վերջում, կնքելով համատեղ գործունեության պայմանագիր, երկու ԲՈՒՀ-երի ղեկավարները հանդգնունք հայտնեցին, որ այս համագործակցությունը կլինի փոխաշահավետ և կծառայի կրթության ու գիտության զարգացմանը:



թյունը կարիք ունեն հեշտ կիրառվող, փոքրածավալ և տնտեսապես շահավետ սարքավորումներով ապահովման: Բուժհաստատություններում կիրառվող սարքավորումները հարմար չեն նշված ոլորտներում կիրառելու համար, իսկ այս համագործակցության արդյունքում

ԲԺՇԿԱԿԱՆԸ ԿՐԿԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԹՎՈՒՄ Է

2014 թվականի տարեվերջին կայացած ՀՀ ԲՈՒՅ-երի ազգային վարկանիշավորման համակարգի արդյունքների ամփոփումը հպարտության զգացումով արձագանքվեց բժշկական համալսարանում, քանի որ Հանրապետության առաջատար ԲՈՒՅ-երի եռյակը կազմում են Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ամերիկյան համալսարանը և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը:

Ամփոփիչ միջոցառմանը մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԲՈՒՅ-երի ղեկավարներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ: Նախարարը, ներկայացնելով վարկանիշավորման համակարգի հիմնական սկզբունքները, հիշեցրել է, որ նախորդ տարի նախարարությունը նախաձեռնել էր փորձնական ծրագիր՝ մշակել ՀՀ ԲՈՒՅ-երի ազգային վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունը, թե ինչպիսի՞ որակ են ապահովում ՀՀ ԲՈՒՅ-երը՝ ելնելով միջազգային չափանիշերից,

որոնք ընկած են ազգային վարկանիշավորման համակարգի հիմքում:

«Այս տարի բազմաթիվ միջազգային և տեղական փորձագետներ են աշխատել, որ այս համակարգը լինի մաքսիմալ օբյեկտիվ և արտահայտի ուսանողակներին որակյալ կրթական ծառայությունների տրամադրման քաղաքականությունը: Այսուհետ վերոնշյալ համակարգը կհանդիսանա այն հիմքը, որով հասարակությանն ամեն տարի կտրամադրվի ՀՀ ԲՈՒՅ-երի գործունեության օբյեկտիվ պատկերը: Համակարգի շնորհիվ ԲՈՒՅ-երը ևս կարող են ուսումնասիրել իրենց թույլ և ուժեղ կողմերը, գործադրել հավելյալ ջանքեր և ճշգրտել՝ ինչպիսի՞ մրցակցային առավելություններ և թերություններ ունեն», - նշել է նախարարը:

Ա. Աշոտյանը նաև տեղեկացրել է, որ նախարարությունը նախատեսում է վարկանիշավորման համակարգի արդյունքների հիման վրա վերանայել պետական քաղաքականությունը մի շարք ոլորտներում: Դա առաջին հերթին կվերաբերի պետական պատվերի ձևավորման սկզ-

բունքներին, որի հիմքում ընկած կլինի նաև վերոնշյալ համակարգում ԲՈՒՅ-ի զբաղեցրած տեղը: «Իհարկե՛ սա չի լինի միակ գործոնը: Մեզ համար առաջնահերթ կլինի ԲՈՒՅ-ի հավատարմագրված լինելու փաստը, իսկ այս երկու գործոնն օգնեն որոշ տվյալներով համադրվում են, որոշ տվյալներով՝ փոխլրացվում:

Երկրորդ՝ այն ԲՈՒՅ-երը, որտեղ կան ակնհայտ խնդիրներ, աջակցություն և լրացուցիչ վերահսկողություն կստանան:

Երրորդ՝ նախարարությունը պատրաստվում է վարկանիշավորման համակարգը փոխանցել կամ համատեղ իրականացնել հասարակության և ԲՈՒՅ-երի վստահությունը վայելող որևէ ոչ պետական կառույցի հետ, ինչպես բոլոր միջազգային վարկանիշավորման համակարգերի պարագայում է», - նշել է նախարարը՝ հավելելով, որ վարկանիշավորման համակարգը շատ օգտակար կարող է լինել նաև ապագա դիմորդների համար:

«ՀԵՐԱՑԻ» ԹԻՎ 1 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Միտանոթային հիվանդություններն առաջատար տեղ են զբաղեցնում ընդհանուր հիվանդացության ցուցանիշերում՝ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր հանրապետությունում: Սակայն որակյալ մասնագիտական բուժօգնությունը ոչ միշտ է հասանելի և մատչելի բնակչության տարբեր խմբերի համար: Այդ նկատառումներով թիվ 1 կլինիկական հիվանդանոցի հարյուրամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկայում իրականացվել է մասնագիտական հետազոտությունների և խորհր-

դատվությունների բարեգործական միամսյակ:

Տարբեր լրատվամիջոցներով բնակչությունն իրազեկվել է միամսյակի մասին:

Անվճար կատարվել են խորհրդատվություններ և էլեկտրասրտագրություն, ինչպես նաև 50% զեղչով էխոսրտագրություն և կորոնարոգրաֆիա:

Միամսյակի շրջանակներում դիմել է 410 հիվանդ, կատարվել է 410 խորհրդատվություն, 410 էլեկտրասրտագրություն, 167 էխոսրտագրություն, 170 կորոնարոգրաֆիա:

Բժշկական հետազոտությունների

մատչելիության և հասանելիության արդյունքում բազմաթիվ պացիենտներ որակյալ մասնագիտական բուժօգնության հնարավորություն ստացան: Իրականացված խորհրդատվությունների և հետազոտությունների շնորհիվ հնարավոր դարձավ մի շարք հիվանդների մոտ կատարել վաղաժամ ախտորոշում և ցուցաբերել մասնագիտական միջամտություն:

Բժշկական համալսարանը ծրագրում է հետագայում ևս իրականացնել նմանատիպ միջոցառումներ:

ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆակուլտետային խորհուրդներում մանրամասն ներկայացվել են ֆակուլտետների, տարբեր կուրսերում և առարկաներից առաջադիմությանը վերաբերող տվյալները, որոնք չափազանց հետաքրքիր նորություններ են պարունակում, նպատակահարմար գտանք, հիմք ընդունելով համալսարանի գիտական խորհրդում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ա. Ավետիսյանի զեկուցումը, ներկայացնել վերոնշյալ հարցերի առնչությամբ նրա բովանդակային, ամփոփ վերլուծությունը, որը կընդգրկի այն մեծածավալ գործողությունների արդյունքները, որոնք արձանագրվել են անցած ուսումնական տարվա ընթացքում:



Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ 2014-15 ուստարվանից սկսած՝ լուրջ և հիմնավորված փոփոխություններ են կատարվել բոլոր ֆակուլտետների, այդ թվում նաև օտարալեզու ուսանողների առաջին կուրսերի ուսումնական պլաններում: Ընդհանուր բժշկության և ստոմատոլոգիական ֆակուլտետներում «Անատոմիա» և «Հյուսվածաբանություն» առարկաների ուսումնասիրությունը սկսվում է առաջին կուրսից: Ընդ որում՝ «Անատոմիա» առարկան ուսումնասիրվելու է երեք կիսամյակ, իսկ «Հյուսվածաբանությունը»՝ երկու: Ավելին՝ «Ֆիզիոլոգիա» առարկայի ուսումնասիրությունը ստոմատոլոգիական ֆակուլտետում նույնպես սկսվում է I կուրսի II կիսամյակից: Ծրագրային առումով նշված առարկաների ծրագրերը չեն փոփոխվել, միայն «բացվել» է «Անատոմիա» առարկայի ծրագիրը: Այս որոշումն իրագործելիս հսկայական աշխատանք է կատարվել համալսարանի ադմինիստրացիայի և ամբիոնների կողմից: Կարճ ժամկետներում ձեռք են բերվել անատոմիական մուլյաժներ և հյուսվածաբանական միկրոպրեպարատներ, թարմացվել ու համալրվել են անատոմիայի ամբիոնի մակրոնկարները, երկու ամբիոնների ուսումնական գրականությունը: Եթե հյուսվածաբանության ամբիոնում մոտ ժամանակներս ամբողջապես լուծվելու է անհրաժեշտ ուսումնական գրականության հարցը, ապա անատոմիայի ամբիոնում հեռահար առումով խնդիր ունենք. անհրաժեշտ է հայալեզու նոր դասագիրք և, ինչու ոչ, նաև ատլաս: Այս գործերն ավարտելու իրատեսական ժամկետ է երեք տարին: Առաջին հայացքից անլուծելի թվացող կարդային խնդիրը լուծեցինք՝ դասավանդման գործընթացում ժամանակավոր ներգրավելով մեր լավագույն կլինիկական օրդինատորներին: Նրանք ամառվա երեք ամիսների ընթացքում հաճախել են ամբիոններ և նրանց հետ տարվել է լուրջ ուսումնամեթոդական աշխատանք:

Բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերում մեկ կիսամյակ դասավանդվում է նաև «Առաջին բժշկական օգնություն» առարկան, որի ծրագիրը նորովի կազմվել է մեր կողմից: Առարկայի դասախոսությունները վարում են համալսարանի տարբեր ամբիոնների լավագույն դասախոսները: Դասախոսություններն ուղեկցվում են գործնական աշխատանքով, ֆիլմերի ցուցադրմամբ և այլն: Դասախոսությունների մի մասը ներկայացվում է համակցված՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ: Վերոնշյալ բոլոր փոփոխությունները պարտադիր էին նախ՝ առաջին կուրսի ուսուցումը ավագ դպրոցի վերջին դասարանի ծրագրային կրկնությունից խուսափելու առումով, քանի որ այդ կուրսում բացառված էին բժշկագիտական առարկաների ուսումնասիրությունները և երկրորդ՝ մեր կողմից բենջմարքինգի էտալոնային համեմատության սկզբունքով ընտրված երկու էտալոնային համալսարաններում այդ առարկաները դասավանդվում են ուսումնառության հենց առաջին տարվանից: Եվ վերջապես՝ փորձնական հավատարմագրում իրագործող մեր փորձագետ գործընկերները, ինչպես նաև Հնդկաստանի և Մալազիայի մեր գործընկերները, նույնպես անցած տարի կատարել են այդ դիտողությունը: Այս փոփոխությունների արդյունքում իրական դարձան ուսանողների ինքնուրույն պարապմունքներին հատկացվող ժամերը. դրանք ակնհայտորեն կրճատվել են՝ 50%-70%-ից մինչև 10-30%-ի:

Դեղագիտական ֆակուլտետի առաջին կուրսի ուսումնական պլաններում նույնպես կատարվել են զգալի փոփոխություններ: Այսպես՝ այս ուստարվա երկրորդ կիսամյակից առաջին կուրսեցիներն ուսումնասիրում են «Ֆիզիոլոգիա անատոմիայի հիմունքներով» առարկան: Այս ֆակուլտետի բակալավրիատի ծրագրերից հանվել են ուռուցքաբանությունը, քիմիաթերապի-

ան և նյարդաբանությունը, իսկ մագիստրատուրայի ծրագրերից՝ ռեաբիլիտալոգիան, պլերգալոգիան, իմունալոգիան և դատական բժշկությունը: Վերանայվում են հիմնական մասնագիտական առարկաների ժամերն ու ծրագրերը: Մեր կողմից հետազոտվել և վերանայվել են առաջին կուրսում ուսումնասիրվող «Բժշկական ֆիզիկա», «Բարձրագույն մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Անօրգանական քիմիա» և «Կենսաօրգանական քիմիա» առարկաների ուսումնական ծրագրերը: Կատարվել են որոշակի փոփոխություններ, և բացառվել են թեմատիկ կրկնություններն ու «ավելցուկները»: Ըստ էության՝ կատարվել է առարկայական ծրագրերի հորիզոնական ինտեգրացիա:

Առարկայական ծրագրերի ինտեգրացիայի վերաբերյալ

Ուսումնամեթոդական վարչության ծրագրերի բաժինը առարկայական ուսումնամեթոդական խորհուրդների և ամբիոնների հետ ծրագրերի ինտեգրացման հարցում իրականացրել է մեծ աշխատանք: Սակայն չնսենացնելով կատարվածը՝ պետք է նշեն, որ դեռ անելիքները շատ են, և միայն աշխատանքի մասն տեմպի դեպքում, կարծում են, ձեռնարկումը կավարտենք հաջորդ տարվա ընթացքում: Հարցի հիմնախնդիրը՝ վերջնարդյունքի սահմանումը և նրանից բխող պետական կրթական չափորոշիչների ձևակերպումը, դեռ ավարտված չեն: Իսկ ինչպես գիտեք՝ վերջնարդյունքը պետք է թելադրի առաջարկվող փոփոխությունները: Կրթության «ուսանողակենտրոն» մոդելի ստեղծման առաջին քայլը պետք է լինի ուսումնառության նպատակների կամ վերջնարդյունքների հստակ ցանկի մշակումը թե՛ դասընթացի, թե՛ վերջինիս յուրաքանչյուր բաղադրիչի դեպքում: Այնուհետև անհրաժեշտ է համազվել, որ ուսանողների առաջադիմությունը գնահատելու համար կիրառվող մեթոդները համապատասխանում են

դասընթացի նախանշված նպատակներին: Վերջնարդյունքների սահմանումը հնարավորություն կընձեռի իրագործելու առարկայական ծրագրերի ուղղահայաց ինտեգրացիա, որից հետո է հնարավոր տարբեր կուրսերում դասավանդվող առարկաների միջև իրագործել հորիզոնական ինտեգրում: Այնուհետ ծրագրերի բաժինը պարտավոր է առարկա առ առարկա ուսումնասիրել բոլոր դասավանդվող առարկաների պլանները և ծրագրերը, դրանք համադրելիությունը: Ապա դրանք ու ինտեգրման ամբողջ քարտեզը պետք է ներկայացվի ուսումնամեթոդական խորհուրդների քննարկմանը և հաստատմանը: Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատվելու դեպքում այդ փոփոխությունները հստակ ժամանակացույցով կիրագործեն ամբիոնները: Հարկ է նշել, որ այդ գործընթացը պետք է իրագործել ինչպես երկաստիճան նախադիպլոմային կրթության, այնպես էլ ինտեգրացված ուսումնական ծրագրի դեպքում:

Ինչպես գիտեք՝ բենչմարքինգի կամ էտալոնային համեմատության մեթոդը պահանջում է էտալոնային համալսարանի կամ համալսարանների ընտրություն: Մեր կողմից ուսումնասիրվել են տարբեր երկրների 38 համադրելի բարձրագույն բժշկական հաստատությունների ուսումնական պլանները և ծրագրերը, որից հետո նրանցից ընտրվել են երկու էտալոնային ԲՈՒՀ-եր՝ Մոսկվայի Սեչենովի անվան բժշկական համալսարանը և Գերմանիայի Դաշնության Մագդեբուրգի համալսարանը: Վերոնշյալ բոլոր փոփոխությունները կատարել ենք առաջին կուրսում, իսկ ապագայում՝ հաջորդ կուրսերում կատարելու ենք այդ համեմատության մեթոդով:

Հաշվի առնելով բարձրագույն կրթությանը ներկայացվող պահանջները՝ բարձր կուրսերում պետք է չսահմանափակվել միայն հայալեզու մասնագիտական գրականությամբ: Նաև այդ նպատակով այսուհետ օտար լեզուները՝ ռուսերենը և անգլերենը տեղացի ուսանողները կուսումնասիրեն նաև երրորդ կուրսում: Գործընկերներս հիշում են, որ նախկինում օտարալեզու ուսանողները հիվանդների հետ լիարժեք շփվելու նպատակով հայերենն ուսումնասիրում էին մինչև չորրորդ կուրս: Նրանք, հատկապես հնդիկները, գրեթե տիրապետում էին լեզվին, որը նպաստում էր նաև հայ միջավայրում նրանց ադապտացիային, նրանք հնարավորություն էին ունենում ծանոթանալու և ուսումնասիրելու մեր մշակույթը՝ դրանով իսկ դառնալով հայ ազգի իրական բարեկամներ: Այս ամենը հաշվի առնելով՝ մենք վերականգնել ենք այդ մոտեցումը. օտարալեզու ուսանողները հայոց լեզուն ուսումնասիրում են երրորդ կուրսը ներառյալ:

Անցած տարվա հաշվետու զեկուցմանս ժամանակ նշեցի, որ կրթական գործըն-

թացի արդյունավետության նվազեցման պատճառներից է ուսանողներին քննություններով և հարցումներով խիստ ծանրաբեռնելը: Մեր կողմից կատարված փոփոխությունների արդյունքում ընդհանուր բժշկության ֆակուլտետի IV-VI կուրսերում ատեստավորման գումարային քանակը 126-ից իջել է 73-ի, ստոմատոլոգիական ֆակուլտետի IV-VI կուրսերում՝ 111-ից 57-ի և դեղագիտական ֆակուլտետի IV-VI կուրսերում՝ 92-ից 40-ի: Հարգելի գործընկերներ, նախկինում, այսինքն՝ անցած ուստարում ընդհանուր բժշկության ֆակուլտետի V կուրսի ուսանողները գարնանային կիսամյակում հանձնում էին 10 քննություն, որից մեկը՝ ամփոփիչ միջառարկայական թեստային քննություն էր և 11 հարցում: Ընդ որում՝ հիմնական մասնագիտական առարկաների հարցումները լրիվ անիմաստ էին ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի վերջին կուրսի երկրորդ կիսամյակում, քանի որ նրանց գնահատականը որևէ նշանակություն չուներ ամփոփիչ ատեստավորման գնահատականի ձևավորման գործընթացում: Այժմ թողել ենք 6 քննություն, 1 հարցում և 2 ստուգաթղթ:

Գիտական խորհրդի որոշման համաձայն՝ արդեն երկու ուստարի է, որ դեղագիտական ֆակուլտետի 2-րդ և 3-րդ կուրսերում «Ֆիզիոլոգիա», «Կենսաքիմիա» և «Վիստաբանություն» առարկաներից կազմակերպվում է մեկ քննություն ուստարվա ավարտին: Այդ առարկաներից առաջադիմությունը նախորդ տարիների համեմատությամբ նվազել է 1/4-1/3-ով: Քննարկվող առարկաների առաջադիմությունը համադրելի է մյուս առարկաների նույն ցուցանիշների հետ: Հասկանալի պատճառներով համեմատել ենք նաև նույն կուրսի առաջադիմությունը կենսաքիմիա և ընդհանուր քիմիա առարկաներից առկա է 19% տարբերություն: Մեր կողմից առավել ընդունելի է 2010-11, 2011-12 ուստարիների առարկայական առաջադիմության պատկերը. «Ընդհանուր քիմիա» առարկայի ավելի ցածր առաջադիմություն՝ բնականաբար «վատ» ուսանողներին հեռացնելու միջոցով, «Կենսաօրգանական քիմիա» և ապա «Կենսաքիմիա» առարկաների տվյալների բարելավում: «Պաթոլոգիա» առարկայի առաջադիմությունը չտարբերվեց համարժեք «Ֆարմակոլոգիա» և «Դեղ. քիմիա» առարկաների տվյալներից: Ի դեպ՝ երբ համեմատեցինք այդ կուրսի առաջադիմությունը անցած ուստարվա «Ֆիզիոլոգիա» առարկայի ցուցանիշների հետ, ապա ստացանք համադրելի արդյունքներ: Նախորդ ուստարում երրորդ կուրսում որոշ առարկաների տվյալները նաև «Պաթոլոգիայի» ցածր առաջադիմության պատճառը երրորդ կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ծանրաբեռնվածությունն էր՝ 6 քննական առարկա:

Քննաշրջանը թեթևացնող անհրաժեշտ փոփոխություններ

Այստեղ մեր կողմից կատարվել են քննաշրջանը թեթևացնող անհրաժեշտ փոփոխություններ. քննաշրջանում հանձնում են 5 քննություն, առաջ է տարվել «Մանրէաբանություն» առարկայի քննությունը, որի հետևանքով հաշվետու շրջանի տվյալներն ավելի բարձր են: Այսպիսով՝ ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ այս մոտեցումը կարելի է աստիճանաբար կիրառել բոլոր ֆակուլտետներում այն առարկաներից, որոնք ունեն ծրագրային առանձնահատկություններ:

Անընդհատ սովորել

Ցանկանում են ընթերցողների ուշադրությունը հրավիրել առաջինից երրորդ կուրսերում ուսումնական գործընթացի ցավոտ կողմերից մեկի՝ կիսամյակի ընթացքում անընդհատ սովորելու հարցի վրա: Ի՞նչ ունենք այսօր: Ուսանողները կիսամյակի ընթացքում նախատեսված 17 շաբաթների ընթացքում լավագույն դեպքում յուրաքանչյուր առարկա ուսումնասիրում էին 6 շաբաթ, իսկ մնացած ժամանակահատվածում պատրաստվում և հանձնում էին մնացած առարկաների հարցումները: Մենք որքան էլ իրագործենք առարկաների ծրագրերի ուղղահայաց և հորիզոնական ինտեգրացիա, մինչև նույն է՝ ուսանողը իր այդ քաղաքականությամբ վիժեցնում է ամբողջ գործընթացը: Համաձայնվեք, որ այդ կուրսերում դասախոսություններին հաճախումների ազատականացման դեպքում կարող է ուսանողներն էլ ավելի օտարվեն ուսումնական ամենօրյա գործընթացից:

Դանդաղ խիզախել և գնալ իրավիճակը շտկող տարբեր հնարքների

Ի դեպ՝ համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնն ուսումնասիրում է դասախոսությունների ազատ հաճախման գործընթացը և հաջորդ տարի կներկայացնի վերլուծություն այդ հարցի վերաբերյալ: Բացարձակ արժեզրկվել են գործնական պարապմունքները, դասախոսների կողմից թեմաների ամենօրյա քննարկումները և այլն: Իհարկե՝ իմ որոշ գործընկերներ կվականակոչեն արտասահմանյան փորձը, որում բացակայում են ընթացիկ առաջադիմությունը, հարցումները: Սակայն այնտեղ էլ գոյություն ունեն նրանց բովանդակային հոմանիշները, օրինակ՝ խմբակային աշխատանքը, տարբեր ներկայացումները և այլն: Ինչպես վարվենք, ինչ անենք և ինչպիսի միջոցներ օգտագործենք: Կարծում են, որ տվյալ դեպքում լիարժեք բենչմարքինգի իրագործման և մեր առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարելի է դանդաղ խիզախել և

զնայլ իրավիճակը շտկող տարբեր հնարքների: Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ այս կիսամյակից առաջինից երրորդ կուրսերում հարցումների քանակը կրկնակի նվազեց: Ավելին՝ այս կիսամյակից լեզուների և հասարակագիտական առարկաների ամբիոններում արդեն համված են ընթացիկ հարցումները, և ուսանողի կիսամյակային գնահատականը կձևավորվի ընթացիկ գնահատականներով: Ի դեպ՝ այդ ամբիոններում մեր կողմից խրախուսվում է գրավոր և խմբակային աշխատանքների կիրառումը: Համաձայնեք, որ լեզուն չեն սովորում միայն թեստերով, կամ Ավարայրի ճակատամարտի տարեթվի իմացությունը չի նշանակում, որ ուսանողը գիտի այդ ճակատամարտի պատմությունը: Այսինքն՝ մենք չպետք է խորշենք առարկայական առանձնահատկությունները հաշվի առնելով կրթական և ատեստավորման տարբեր միջոցներ կիրառելուց: Այս ամբիոնների վարիչներին հանձնարարված է կիսամյակի վերջում հանդես գալ վերլուծական հաշվետվություններով: Համոզված եմ, որ հարցին այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա վեր հանելու մոդելի թերությունները, առաջարկելու դրանց լուծումները և արդյունքում կատարելագործելու ուսանողի առաջադիմության գնահատման համակարգը: Կարծում եմ՝ այս մոտեցումը կխթանի ուսանողի գիտելիքների ձեռքբերումը ամբողջ կիսամյակի ընթացքում, քանի որ արագ ձեռք բերված գիտելիքը արագ էլ կորչում է, և մնացորդային գիտելիքի մասին խոսելն այստեղ ավելորդ է: Մյուս կողմից՝ ամբիոնի և մասնավորապես դասախոսի վարկանիշը պահպանվում է ընդունելի մակարդակի վրա: Փորձը հաջողվելու դեպքում առաջարկում ենք այս ուստարվա հաջորդ կիսամյակից նման մոտեցում կիրառել նաև երկրորդ կուրսում ուսումնասիրվող «Ֆիզիոլոգիա» և «Կենսաքիմիա» առարկաներն ուսումնասիրելիս: Իհարկե՝ այս դեպքում ընթացիկ առաջադիմությամբ որոշվող կիսամյակային գնահատականը համակարգչային քննական գնահատականի հետ մեկտեղ կմասնակցի վերջնական գնահատականի ձևավորմանը:

Բազմաբաղադրյալ գնահատական

Բազմիցս խոսել ենք բազմաբաղադրյալ գնահատականի մասին: Գնահատման այս համակարգը դրական քննություն և կյանքի իրավունք է վաստակել ոչ միայն արտասահմանում, այլև մեր երկրի այլ համալսարաններում: Կարծում եմ՝ ժամանակն է այն կիրառել նաև մեզանում: Առաջարկում եմ հաջորդ ուստարվանից այդ մոդելը ներդնել «Հիգիենայի և էկոլոգիայի» ու «Հանրային առողջության և առողջապահության կազմակերպման» (այստեղ միայն մագիստրոսական ծրագրում) ամբիոններում՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկու-

թյունները, ամբիոնների հնարավորությունները և այն, որ այդ ամբիոններից առաջինի վարիչը տվյալ մոդելի հեղինակն ու ամենալուրջ ջատագովն է: Համոզված եմ, որ այդ փորձը կհաջողվի, և մենք այն հիմնավորված կարող ենք իրացնել նաև այլ ամբիոններում:

Բանավոր քննություններ

Ինչպես գիտեք, գիտական խորհրդի որոշմամբ 2012-13 ուստարվանից բոլոր ֆակուլտետներում մագիստրատուրայում՝ հիմնական մասնագիտական 18, իսկ 2014-15 ուստարվա աշնանային կիսամյակից նաև բակալավրիատում՝ 13 առարկաներից քննություններն ամբիոններում կազմակերպվեցին բանավոր:

Նախորդ տարի ներկայացնելով այդ առարկաների բանավոր քննության ոչ միանշանակ արդյունքները՝ հիշեցնեմ. ընդհանուր բժշկության ֆակուլտետում առաջադիմությունը գրեթե անփոփոխ էր, իսկ մյուս ֆակուլտետներում որոշ առարկաներից մվազել էր: Մենք խոստացանք (և դա տրամաբանական է) ամբողջական վերլուծական պատկեր ներկայացնել այդ կուրսի մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման, հատկապես բանավոր քննություններից հետո: Այս վերլուծությունը խիստ կարևոր է, քանի որ այն որոշակիորեն կարող է ի հայտ բերել բանավոր քննությունների ավելի լայն ներդրման ակնկալվող արդյունքները: Ուստի այս տարվա վերլուծականը մեզ հնարավորություն կընձեռի համապատասխան հետևություններ անել: Եվ այսպես՝ ամփոփիչ ատեստավորման արդյունքները բոլոր ֆակուլտետներում էապես չեն տարբերվում այդ նույն կուրսի քննարկվող առարկաների նույն տվյալներից: Ակնհայտ է, որ գրեթե բոլոր առարկաներից բարձրացել է «գերազանց» և «լավ» գնահատականների տեսակարար կշիռը, որը մի կողմից հավանաբար պայմանավորված է ծրագրային կրկնություններով, իսկ մյուս կողմից՝ նաև ուսանողների հասունությամբ: Իհարկե՝ այս տվյալները ծանրակշիռ կլինեն մի քանի տարիների արդյունքներն ամփոփելուց հետո, սակայն կարծում եմ, որ այս փորձը կարելի է հաջողված համարել: Այդ իսկ պատճառով մենք այն այս ուստարվանից կիրառում ենք նաև բակալավրիատում: Ավելին՝ ուսումնամեթոդական վարչությունն առաջարկում է հաջորդ ուստարվանից «Ախտաբանական անատոմիա» առարկայից որպես քննական գնահատականի բաղադրյալ հաստատել նաև պաթոմատոմիական մակրոպատմության բանավոր նկարագրությունը: Այսպիսով՝ այդ առարկայի ատեստավորման վերջնական գնահատականը նույնպես կլինի յուրովի բազմաբաղադրյալ՝ կիսամյակային, նկարագրական բանավոր և թեստային:

Ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ

Նախ շնորհակալություն եմ հայտնում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներին, անդամներին և առարկայական հանձնաժողովներին օբյեկտիվ ու բարեխիղճ աշխատանքի համար: 2013-14 ուստարվա ամփոփիչ ատեստավորումն անցավ պատշաճ մակարդակով:

Բակալավրիատի ամփոփիչ ատեստավորումն, ինչպես միշտ, իրականացվել է համակարգչային միջառարկայական թեստային քննությամբ: Առաջարկում ենք այս ուստարվանից բակալավրիատի ամփոփիչ միջառարկայական թեստային քննության փաթեթը կազմված կլինի երեքական հիմնական մասնագիտական առարկաների թեստերից: Նշեմ, որ ինտեգրացված ուսուցման ծրագրի դեպքում այս ամփոփիչ ատեստավորումը պահպանվելու է միայն դեղագիտական ֆակուլտետում, քանի որ միայն այս ֆակուլտետում է գործելու կրթության նախադիվանային երկաստիճան համակարգը:

Մագիստրատուրայում ամփոփիչ ատեստավորումը նորից եռափուլ էր՝ գործնական ունակությունների ստուգաբաժնի, առարկայական համակարգչային թեստային և բանավոր քննություններ: Ներկայացվածից հետևում է, որ և՛ բացարձակ, և՛ տոկոսային առումով «անբավարար» ստացող շրջանավարտների գերակշիռ մասը ստոմատոլոգիական ֆակուլտետի շրջանավարտներ են: Ի դեպ՝ նույն է վիճակը բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման միջառարկայական թեստային քննության դեպքում: Կարծում եմ, որ դեկանատը, ստոմատոլոգիական առարկաների ուսումնամեթոդական խորհուրդը և ամբիոնները պետք է ուսումնասիրեն այս տվյալներն ու փորձեն բացատրել կատարվածի պատճառներն ու մեխանիզմները: Այդ գործողությունների արդյունավետությունը կպարզվի՝ այս ուստարվա ամփոփիչ ատեստավորման տվյալներից ելնելով: Գիտական խորհրդի որոշման համաձայն, նաև հաշվի առնելով փորձնական հավատարմագրում իրականացնող փորձագետների կարծիքը՝ այս ուստարում դեղագիտական ֆակուլտետի ուսանողներին ընձեռել ենք ատեստավորման ձևի ընտրության իրավունք, մասնավորապես՝ շրջանավարտներին հնարավորություն է տրվել ընտրություն կատարելու ամփոփիչ ատեստավորման առարկայական բանավոր քննության և թեզ պաշտպանելու միջև: Տեղեկացնեմ գործընկեր-

ներիս, որ այս ուստարում դեղագիտական ֆակուլտետի երկու շրջանավարտներ նախընտրել են մագիստրոսական թեզի պաշտպանությունը: Ամփոփիչ ատեստավորման բանավոր քննություններին մասնակցող գործընկերներս և շրջանավարտները կփաստեն, որ քննական հանձնաժողովների ծանրաբեռնվածությունը խիստ մեծ է: Ավելին՝ ստոմատոլոգիական ֆակուլտետում հաճախ գերազանցում ենք բանավոր քննությունների համար նախատեսված ժամաքանակը: Այդ իսկ պատճառով՝ գիտական խորհրդին ներկայացված իմ զեկույցում առաջարկեցի հնարավորության սահմաններում այս ուստարում մեկով մեծացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների քանակը ստոմատոլոգիական ֆակուլտետում:

Հաշվետու ուստարում համապատասխան առարկաների միջառարկայական թեստային քննության փոխարեն շրջանավարտները հանձնել են առանձին բաղադրիչներով՝ 50+50+50 համամասնությամբ առարկայական թեստային քննություն: Վերջնական գնահատականի ձևավորման ժամանակ, օրինակ՝ վիրաբուժական հիվանդությունների թեստային գնահատականը միջինացվել է այդ նույն առարկայի բանավոր քննության արդյունքի հետ: Եթե ուսանողն այդ առարկաներից որևէ մեկի թեստային քննությունից ստացել է անբավարար գնահատական, ապա նա գրվել է միայն այդ առարկայի բանավոր քննությունից և ոչ մնացած քննություններից՝ ինչպես ընդունված էր նախկինում:

Այժմ ցանկանում են լսարանի ուշադրությունը հրավիրել հաշվետու ուստարում մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման ժամանակ հայտնաբերված հետևյալ մի քանի փաստերի վրա: Նշեն, որ նման փաստեր ունեցել ենք նաև նախորդ ուստարիներում, սակայն վերլուծելու հնարավորություն ստացել ենք միայն այս ուստարում՝ պայմանավորված միջառարկայական թեստային քննությամբ փոխարինելով: Համեմատել ենք ամփոփիչ ատեստավորման առարկայական թեստային և բանավոր քննությունների արդյունքներն ըստ ֆակուլտետների և առարկաների: Հետազոտության թիրախ ընտրել ենք ատեստավորման այդ երկու բաղադրյալների գնահատականային տարբերությունը՝ սկսած 3 միավորից՝ անվանելով այն գնահատականային «մկրատ»: Այդպիսի «մկրատներ» հայտնաբերվել են ատեստավորվող 547 շրջանավարտից 124-ի դեպքում (23%), որոնցից 37-ը (30%) օտարալեզուներ են: Ընդ որում՝ 108 շրջանավարտի դեպքում (մոտավորապես 88%) ավելի բարձր է եղել թեստային ատեստավորման գնահատականը, իսկ 15-ի դեպքում (մոտավորապես 12%)՝ ընդհակառակն: Ի դեպ՝ առաջին խմբի շրջանավարտների ճնշող մեծամասնու-

թյունը բանավոր քննության ժամանակ ստացել է անբավարար գնահատականներ, ավելին՝ նրանց մի սովոր մասը գնահատվել է ամենացածր՝ 1 կամ 2 բացասական գնահատականերով: Բայց չէ՞ որ այդ ուսանողները նախորդ ուստարում մագիստրատուրայի առաջին կուրսում անցկացված բանավոր քննություններից ստացել են դրական գնահատականներ: Եվ, ինչպես նշեցի վերևում, այդ քննությունների ժամանակ գերակշռում էին «լավ» և «գերազանց» գնահատականները: Իհարկե՝ միայն մեկ տարվա տվյալների վերլուծության միջոցով օրինաչափությունները, դրանց բուն պատճառները հայտնաբերելը հնարավոր չէ: Մենք հաջորդ տարիների ընթացքում կշարունակենք հետազոտել այդ ցուցանիշերը, և, կարծում են, կհասկանանք ու կներկայացնենք այդ «մկրատների» պատճառները՝ դրանք վերացնելու ակնկալով: Սակայն ստացված տվյալներն արդեն իսկ բավարար են ձեռնարկելու որոշակի գործողություններ: Առաջարկում ենք այս ուստարվա մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման թեստային բանկը համալրել և թարմացնել առնվազն 30%-ի չափով: Ակնկալում ենք նաև, որ խնդրի վրա համուղող ազդեցություն կունենա նաև այս տարի շահագործման հանձնվող գործնական ունակությունների կինոմատոգրաֆիկ ներկայացումը սինոկոնցիպից ատեստավորման առաջին փուլի՝ գործնական ունակությունների գնահատականային ատեստավորումը, որը նախկինում կատարվում էր ստուգաբանի միջոցով: Այսպիսով՝ մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը նույնպես այսուհետ կլինի իրական բազմաբաղադրյալ՝ գործնական ունակություններ, առարկայական թեստային և բանավոր քննություններ: Ավածը պահանջում է ամբիոնների կողմից վերանայել գործնական ունակությունների հարցաշարերը՝ ելնելով մեր կենտրոնի ընձեռած հնարավորություններից:

Բազմիցս նշվել է, որ ուսումնական գործընթացում մեր աքիլեսյան գարշապարը, հատկապես, մագիստրատուրայի ուսանողների շրջանում, գործնական ունակությունների ձեռքբերման գործընթացն է: Խնդրի լուծման ավելի ծախսատար, հեռահար, բայց միևնույն ժամանակ արդյունավետ միջոց է գործնական ունակությունների համալսարանական կենտրոնի ստեղծումը: Ուսանողը կարող է ոչ միայն ձեռք բերել գործնական ունակություն մուլտիմեդիա, սինոկոնցիպի վրա, այլև համակարգով գնահատվել կատարած աշխատանքի որակի համար: Ուրախությամբ պետք է նշեն, որ համալսարանի գործնական ունակությունների կենտրոնի բացումը տեղի ունեցավ անցած տարվա վերջին, իսկ աշխատանքն ամբողջ ծավալով կմեկնարկի այս ուստարվա հաջորդ կիսամյակից: Կենտրոնի ստեղծման աշխատանքներն

ուղեկցվել են տարբեր ամբիոններում առկա մուլտիմեդիա և վարժասարքերի հավաքագրմամբ: Աշխատանքի առաջին փուլում այստեղ նախատեսվում է հստակ դասաժամերով կազմակերպել նախադիպլոմային փուլում սովորող ուսանողների գործնական աշխատանքները: Գործնական ունակությունների համալսարանական կենտրոնում ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողները կուսուցանվեն հիմնական մասնագիտական առարկաների ուսումնական ծրագրով նախատեսված ունակությունները, կիդկեն դրանք և կհեշտացնեն հետդիպլոմային փուլում հիվանդների վրա մինևույն գործողությունների իրականացման գործընթացը: Նախատեսվում է նաև այդ կենտրոնում կատարել ուսանողների գործնական ունակությունների ընթացիկ ատեստավորում, նաև, ինչպես նշեցի, մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման բաղադրյալներից առաջինը: Այսպիսով՝ գործնական ունակությունների դասավանդման գործընթացը համալրվում է հզոր միջոցով: Դեղագիտական ֆակուլտետում հիմնական մասնագիտական առարկաների նյութատեխնիկական բազայի տեսանկյունից վարչական մասնաշենքի նկուղային հարկում լաբորատորիայի գործարկումը, որը կարող է ծառայել որպես սինոկոնցիպի կենտրոն, որոշակիորեն կփոքրացնի լաբվածությունն այս ֆակուլտետում: Գործնական ունակությունների առումով դեռ անբավարար է վիճակը ստոմատոլոգիական ֆակուլտետում: Կարծում են, որ արմինիստրացիան, հաշվի առնելով հատկապես այս ֆակուլտետում այդ գործընթացի կարևորությունը, կձեռնարկի համապատասխան համալիր քայլեր՝ կարգի բերելով ֆանտոմային լսարանները, ապահովելով դրանք համապատասխան նյութերով և մոտ ապագայում համալսարանի սինոկոնցիպի կենտրոնը կհամալրի նաև ստոմատոլոգիական սինոկոնցիպի ստեղծումը:

Մնացորդային գիտելիքների ստուգում

Ուսումնական գործընթացում կատարվող փոփոխությունների արդյունքները վերլուծելու լավագույն գործիքներից է մնացորդային գիտելիքների ստուգման մեթոդը: Համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից մշակման մեջ է վերջնաարդյունքների ստուգման միջոցով (որի մեջ մտնելու են ինչպես հիմնական մասնագիտական, այնպես էլ տեսական բժշկության հարցերը) կրթության որակի գնահատման ցուցանիշերի ձևավորումը:

Անդրադառնանք ուսումնական գործընթացի հիմնարար միջոցներից մեկի՝ գրադարանի խնդիրներին

Այս ուստարում շարունակվել է ուսումնական գործընթացում օգտագործվող գրականության թվայնացումը, գրադարանը համալրվել է 18 դասագրքերի էլեկտրոնային տարբերակներով: Մեր կողմից 2014-ին ձեռք է բերվել 4.778 միավոր գրականություն, որից ուսումնական՝ 4.590: Սակայն դեռևս առկա է որոշ դասագրքերի պակասորդ, որը հանգեցնում է կրկնօրինակների անօրինական բազմացմանը, վաճառքին և համալսարանի հետ կապ չունեցող անձանց հարստացմանը: Համոզված եմ՝ դեկավարության կողմից դասագրքերի ամենամյա համալրման որդեգրած քաղաքականությունը շուտով կբացառի գրքերի պակասը:

Մեր կողմից մշակվում է ուսումնական գրականությունը ձևակերպելու և գրախոսելու կարգը, և մենք մոտ ժամանակներս այն կներկայացնենք գիտական խորհրդի հաստատմանը: Նշեն, որ մույնիսկ ազգային կրթության ինստիտուտը և ԲՈՂ-ը չունեն մանրամասն մշակված չափանիշեր: Նման չափանիշերի մշակումը կհամակարգի ուսումնամեթոդական խորհուրդների մանօրինակ աշխատանքը:

Այսօրվա դրությամբ գրադարանն ունի 6.400 ընթերցող: Օրվա ընթացքում նրա ծառայություններից օգտվողների միջին թիվը 600 է: Սպասարկման աշխատանքներին զուգընթաց՝ մեծ աշխատանք է կատարվում գրապահոցում. առանձնացվում են մաշված, արդիականությունը կորցրած գրքերը, որը շատ աշխատատար է ծանր գործ է: Միաժամանակ շարունակվում են հայաստանյան գրադարանների համահավաք քարտարանի հետ տարվող աշխատանքները: Ավարտից են մոտենում վարչական մասնաշենքի նկուղային հարկում տեղակայված էլեկտրոնային ընթերցասրահի տեխնիկական զինման աշխատանքները: Այս կիսամյակից համալսարանում կգործեն երկու էլեկտրոնային ընթերցասրահներ՝ լաբորատոր մասնաշենքի առաջին հարկում և վարչական մասնաշենքում: Այդ ընթերցասրահները քննաշրջանում կվերածվեն քննասրահների: Այսպիսով՝ գիտական խորհրդի կողմից մեզ տրված հանձնարարականն այս առումով կատարված է:

Ուսումնական գործընթացի որոշ թերություններ պայմանավորված են դասախոսական կազմի որակով: Այստեղ կան թերություններ: Վերջին տարիներին մրցույթով անցած դասախոսների որակի գնահատման չափորոշիչների հիման վրա 2014-ի սեպտեմբերին մշակվել են դասախոսների որակի գնահատման մի-

շային չափանիշերը: Բոլոր ամբիոնների մրցույթով անցնելուց հետո միայն այդ միշերը կստանան իրենց վերջնական հավաստի տեսքը:

Ինչպես և խոստացել էինք՝ այս ուստարվանից 25%-ով նվազեցրել ենք լսարանային բեռնվածությունը, դրանով իսկ դասախոսներին և ուսանողներին ժամանակ հատկացրել հետազոտական և գիտական աշխատանքներ իրագործելու համար:

Հստակեցվել է կանոնակարգվել է ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ ամբիոնի վարիչ-պրոֆեսոր-դոցենտ-ավագ դասախոս-դասախոսասիստենտ տարակարգերով, որը նույնպես բեռնաթափման միջոց է:

Կրթել կրթողին

«Կրթել կրթողին» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ուսանողների համար այս ուստարվա նոյեմբերի 1-ից մեկնարկում է «մաստեր կլաս կամ վարպետաց դասեր» ծրագիրը: Յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ շաբաթ օրը, մեր լավագույն դասախոսների մասնակցությամբ ներկայացվելու են պրոբլեմային դասախոսություններ: Մոտ ապագայում այդ գործընթացի մեջ կներգրավվեն նաև արտերկրի մասնագետներ: Մեր կողմից այդ դասախոսություններն իրագործող թիմին հանձնարարվել է պրոբլեմային դասախոսությունների ժամանակ լսարանի ուշադրությունը հրավիրել տարիքային գործոնի վրա: Կարծում եմ, որ այս մոտեցման միջոցով մենք կկարողանանք տեղեկատվական հիմք նախապատրաստել բարձր կուրսերում «հերիատրիայի» միջառարկայական դասավանդման համար:

Ուսումնամեթոդական վարչության դասախոսների վերապատրաստման բաժինը մշակել է և մոտ ժամանակներս մեր դատին կներկայացնի այդ գործընթացի նոր մեթոդաբանությունը:

2013-14 ուստարվա գարնանային կիսամյակում կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից կայծակնային ծրագրի շրջանակում իրականացվել է «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցումը՝ առցանց տարբերակով: Հարցումն անցկացվել է կամավորության սկզբունքով, որին մասնակցել է ուսանողության 46%-ը:

Կանոնակարգերի վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտել և հաստատել ենք մի շարք կարևոր կանոնակարգեր: Բազմաթիվ կանոնակարգերի և կարգերի ստեղծումն ու թարմացումը համալսարանում բավականին դյուրին է դարձնում ուսումնական վարչական աշխատանքը: Նման փաստաթղթերի ստեղծումը և դրա արդյունքում աշխատանքի դյուրացումը դրական

գնահատվեցին համալսարանի աշխատանքները ստուգող բոլոր հանձնաժողովների կողմից:

Կարծում եմ ուսանողների սովորելու շարժառիթների վրա դրականորեն կարող է ազդել արտասահմանյան առաջատար երկրներում ընդունված այնպիսի պարտադիր տարրի ներմուծումը, ինչպիսին է կրթական ծրագրերի ուսանողի ձեռնարկ-ուղեցույցի ստեղծումը, որի միջոցով ուսանողը կարող է ճիշտ պատկերացնել այն, ինչ, ի վերջո, պահանջվում է նրանից, ճիշտ հաշվարկել իր ուժերը, ժամանակը, նպատակը և սպասելիքները: Կանոնակարգելով ուսումնական գործընթացի տարբեր բաղադրյալները՝ համոզված եմ, որ համալսարանն արդեն պատրաստ է ունենալ ուսումնական գործընթացի ամբողջական տեղեկատվական ուղեցույց: Ուղեցույցը պետք է տրամադրել բոլոր ուսանողներին՝ սկսած հաջորդ ուստարվա առաջին կուրսից:

Էլեկտրոնային համալսարանի մասին

Էլեկտրոնային համալսարանի կարևոր որոշ բաղադրյալներ՝ ուսանողների նույնականացման քարտերը, որոնք փոխարինում են ուսանողական տոմսին և ստուգման գրքույկներին, ուսանողների անձնական թերթիկները, համակարգչային հարցումներն ու քննությունները, էլեկտրոնային գրադարանի որոշ տարրեր արդեն իրականություն են: Սակայն բացակայում են ID քարտերի ռեգիստրները, թղթի վրա մնացին համալսարանի տարածքից դուրս գտնվող ամբիոնների համակարգչային ընդգրկման և բացակայությունների ատեստավորման թվայնացման, քննական և դեկամատային ծրագրերի «համաձայնեցման», համակարգչային քննության արդյունքները որակական վերլուծության ենթարկող ծրագրի ստեղծման գործընթացները:

Ինֆորմացիոն հաղորդակցության ու տեխնոլոգիաների բաժինն արդեն ձեռնամուխ է եղել համակարգչային նոր ծրագրի ստեղծման աշխատանքներին: Կարծում եմ, որ նրա գործարկմամբ կիրագործվեն վերոնշյալ խնդիրները՝ քննական և դեկամատային ծրագրերի «համաձայնեցման» ու համակարգչային քննության արդյունքների որակական վերլուծության գործընթացները:

Վերջում նշեն, որ ռեկտորի հրամանով ստեղծվել էր ամբիոնների և առարկաների անվանումների վերանայման հատուկ հանձնաժողով: Վերջինիս ներկայացրած որոշումները քննարկվել և հաստատվել են համապատասխան ուսումնամեթոդական խորհուրդներում, և համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի որակյալ որոշման դեպքում կյանքի կկոչվեն:

ԵՌԱԿՈՂՄ ՅՈՒՇԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երևանի Մ.Յերազու անվան պետական բժշկական համալսարանում ստորագրվեց համագործակցության եռակողմ հուշագիր բանտային (պենիտենցիար) բժշկության վերաբերյալ Երևանի պետական բժշկական համալսարանի, ՀՀ առողջապահության և արդարադատության նախարարությունների միջև:

Ստորագրող կողմերը կարևորեցին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունն ու սպասարկումը պատշաճ կազմակերպելու անհրաժեշտությունը, նրանց առողջության պահպանումն ու վերականգնումը, բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող մասնագիտական անհրաժեշտ կադրերի պատրաստման կարևորությունը և այլ խնդիրներ:

ՀՀ արդարադատության նախարար Յուրի Բախչևան Մանուկյանն իր խոսքում նշեց, որ նախարար նշանակվելուց հետո իր ուշադրության կենտրոնում է հայտնվել այդ ընթացքում մամուլում շրջանառվող այն տեղեկատվությունը, որ քրեակատարողական համակարգում բուժանձնակազմի պակաս կա, և քրեակատարողականների բժիշկները ֆիզիկապես չեն հասցնում օգնություն ցուցաբերել բոլորին: «Ուսումնասիրելով հարցի էությունը, ինչպես նաև ստանալով բազմաթիվ նամակներ հենց քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանցից ու նրանց հարազատներից՝ որոշեցինք հարցին տալ համակարգային լուծում», - ասաց նախարարը: Նա տեղեկացրեց, որ հաշվի առնելով այս ամենը՝ բազմաթիվ աշխատանքային քննարկումների և մասնագիտական խորհրդատվությունների արդյունքում պայամանվորվածություն ձեռք բերվեց ՀՀ առողջապահության նախարարության և Երևանի Մխիթար Յերազու անվան պետական բժշկական համալսարանի հետ համագործակցության հուշագիր կնքելու վե-



րաբերյալ, ինչը հնարավորություն կտա լուծել տարիների ընթացքում համակարգի առջև ծառայած մի շարք խնդիրներ:

ՀՀ առողջապահության նախարար Արմեն Սուրադյանը նշեց, որ իրենք ևս անմասն չեն մնա և կաջակցեն քրեակատարողական հիմնարկներում մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարելավմանն ուղղված աշխատանքներին՝ թե՛ խորհրդակցական, թե՛ տեղում բժշկական օգնություն տրամադրելու, թե՛ կադրերի վերապատրաստում իրականացնելու հարցում:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, կարևորելով գործընկեր գերատեսչությունների և ԵՊԲՀ-ի այս նախաձեռնությունը, նշեց. «Այսօր Երևանի պետական բժշկական համալսարանն ունի երկու կարևոր առաքելություն, քանի որ այս ԲՈւՀ-ը հանրապետության լավագույն ուսումնական հաստատություններից և առողջապահական խոշորագույն հիմնարկներից մեկն է, և այսօրվա ծրագրի մեկնարկը մենք կարևորում ենք նպատակային կրթական ծառայությունների մատուցման տեսակետից: Այս ծրագիրը որոշակի պատվեր է ԲՈւՀ-ին՝ պատրաստել այնպիսի կադրեր, որոնք ապագայում պահանջված կլինեն աշխատանքային: Կարծում են՝ բժշկական համալսարանի համբավը և փորձը թույլ կտա լավատեսությամբ տրա-

մադրվել ծրագրի վերջնարդյունքների գնահատման ուղղությամբ, և հաշվի առնելով, որ այս միջոցառումը տեղի է ունենում մեր երեք գերատեսչություններից երկուսի համար մայր ԲՈւՀ-ում՝ ես կարծում եմ, որ մենք բավականին ճիշտ ու լավ աշխատանքի ենք լծվել: Վստահ եմ՝ թե՛ ԲՈւՀ-ի ղեկավարությունը, թե՛ ողջ անձնակազմը ամեն ինչ կանեն՝ ծրագրի իրականացման հետ կապված բոլոր ակնկալիքներն իրականացնելու համար»:

ԵՊԲՀ ղեկավարի Ժ/պ Միքայել Նարինյանյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց վստահության համար և նշեց, որ ծրագիրը որքանով հետաքրքիր, այնքանով էլ պարտավորեցնող է: «Ես հավաստիացնում եմ, որ մեր համալսարանի ամբողջ և՛ կրթական, և՛ հետազոտական, և՛ կազմակերպչական ներուժը կօգտագործվի այդ խնդիրը լուծելու համար»:

Նշենք, որ հուշագրի ստորագրմանը ներկա էին ՀՀ կրթության և գիտության, արդարադատության, առողջապահության նախարարությունների այլ պաշտոնյաներ, ԵՊԲՀ աշխատակիցներ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայաստանյան գրասենյակի ղեկավար Թաթուլ Հակոբյանը և այլոք:

«ԴԱՍԱԽՈՍԸ ՈՒՍԱՆՈՂԻ ԱԶՔԵՐՈՎ»

2014 թվականից համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից առաջին անգամ առցանց տարբերակով իրականացվեց «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցում: Հարցման առցանց անցկացման խնդիրը քննարկվել և հավանության է արժանացել համալսարանի ռեկտորատի նիստում՝ ելնելով առցանց տարբերակով հարցման հետևյալ առավելություններից.

- եթե նախկինում այս հարցման պրոցեսում ընգրկված էին համալսարանի չորս աշխատակիցներ, ապա այս դեպքում աշխատանքն իրականացվելու է միայն օպերատորի միջոցով,

- հարցման անցկացման տևողությունը կրճատվում է երեք անգամ,

- հարցման արդյունքների բովանդակային ամփոփումը (յուրաքանչյուր հարցի մանրամասն վերլուծությունը) տրվում է հարցման ավարտից անմիջապես հետո (հաջորդ օրը),

- հարցման անցկացումը չի խանգարում ուսումնական պրոցեսին,

- հարցումն ուսանողից պահանջում է ավելի քիչ ժամանակ, և ուսանողը կարող է այն լրացնել 20 օրվա ընթացքում, օրվա ցանկացած պահին,

- հարցումը հնարավորություն է տալիս ուսանողին ուսումնական պրոցեսի վերաբերյալ առանձին տողով ներկայացնել իր առաջարկությունները և դիտողությունները:

Այս հոդվածում ցանկանում են

ամփոփել փորձնական ծրագրով առցանց հարցման ժամանակ ուսանողների կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները և հրավիրում են համապատասխան ստորաբաժանումների ուշադրությունը բարձրացված հարցերի նկատմամբ:

Նախ՝ փաստենք, որ առաջին անգամը լինելով՝ առանց որևէ պարտադրանքի, ուսանողների 1/3-ից ավելին արձագանքել է հարցմանը և բարեխղճորեն պատասխանել բոլոր հարցադրումներին:

Նշենք նաև, որ եթե ուսանողների շրջանում մեծանա հավատը հարցման արդյունքների վերլուծության հիման վրա համալսարանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ, մենք համոզված ենք, որ էլ ավելի մեծ թվով ուսանողներ կմասնակցեն հարցմանը՝ շատ ավելի կառուցողական առաջարկություններով:

Հարցմանը մասնակցած ուսանողների մոտ 20%-ը առաջարկված բոլոր հարցերի հետ միասին լրացրել էր նաև «բաց» տողը՝ անելով առաջարկություններ և դիտողություններ:

Մեզ համար մի փոքր անհասկանալի էր, որ այդ առաջարկությունների միայն 5%-ն էր արված գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների կողմից:

Առաջարկությունների 60%-ը արել էին «լավ» և 35%-ը՝ «բավարար» առաջադիմություն ունեցող ուսանողները:

Բոլոր առաջարկությունները և դիտողությունները խմբավորվել



են մեր կողմից և ներկայացվում են ձեր ուշադրությանը:

Եթե բարձրացված հարցերը ներկայացնենք ըստ հանդիպման հաճախականության, ապա ամենից շատ (15%) ուսանողները խոսում էին ուսումնական գրականությունից. նրանք առաջարկում էին թարմացնել և/կամ փոխել (անատոմիա, ֆիզիոլոգիա, թերապիա, համաճարակաբանություն, մաշկավեներաբանություն) դասագրքերը, նոր կազմվող դասագրքերում ավելի շատ ներառել նկարներ, սխեմաներ:

Կային նաև առաջարկներ (հատկապես բարձր կուրսերի ուսանողների կողմից)՝ ստեղծել հանձնաժողով, որը կիրականացներ մասնագիտական գրականության ճիշտ թարգմանություն (ուսանողները բերում էին օրինակներ, երբ նույն տերմինը տարբեր դասագրքերում տար-

բեր ձևով է թարգմանված կամ ընդհանրապես չի թարգմանված):

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին համալսարանում ակտիվացել է նոր դասագրքերի հրատարակումը՝ այնուամենայնիվ ուսանողները բողոքում էին դասագրքերի անբավարար քանակից և պատճեններից(xerox):

Առաջարկությունների մեջ որոշակի հաճախությամբ (10%) կրկնվում էին «բանավոր» քննությունների և ընթացիկ գնահատականների վերաբերյալ հարցերը, չնայած մի քանի (4) ուսանող միանշանակ կողմ էին արտահայտվել գրավոր քննություններին՝ հիմքում դիտարկելով դրանց օբյեկտիվությունը:

Մեզ համար մի քիչ անհասկանալի էին այն հարցերը, որոնք վերաբերում էին ուսանողների կողմից թեստերի սխալ պատասխանների հետ ծանոթացմանը, որովհետև, ըստ վերջին կանոնակարգի՝ ուսանողն իրավունք ունի բողոքարկման ժամանակ ծանոթանալ իր կողմից նշված 10 թեստի հետ, իսկ որևէ սխալ հայտնաբերելու դեպքում՝ նաև ևս ցանկացած 10 թեստի հետ:

Լուրջ թիվ էին կազմում այն առաջարկությունները, որտեղ խոսվում էր լաբորատոր փորձերի, գործնական հմտությունների, հիվանդների հետ շփման, մուլյաժների հետ աշխատելու ոչ բավարար մակարդակի մասին: Այսօր, երբ համալսարանում բացվել է սիմուլյացիոն կենտրոն, կարծում ենք, որ աշխատանքների ճիշտ կազմակերպման և դրա հետագա ընդլայնման պայմաններում այս հարցը կարող է բավարար լուծում ստանալ:

Կային նաև հետաքրքիր առաջարկություններ՝ կապված առարկաների ուղղահայաց ինտեգրացիայի հետ (խնդրի վրա

հիմնված համատեղ դասախոսություններ):

Ուսանողները խոսում էին նաև ծրագրերի կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության մասին:

Դժգոհությունների մի սովորաբաժինը վերաբերում էր «Թերապիա» առարկայի դասավանդմանը՝ հատկապես թերապիայի թիվ 2 ամբիոնում: Առաջարկվում էր նաև այս առարկան դասավանդել ըստ մոդուլների՝ համապատասխան մասնագետների կողմից, հակառակ դեպքում նրանք կամ տեսնում են միայն տվյալ մասնագետի մոտ բուժվող նույն նոզոլոգիայով հիվանդներին, կամ ընդհանրապես հիվանդ չեն տեսնում (որովհետև պարապոդ դասախոսը հիվանդ չի վարում):

Ուսանողների կողմից առաջարկվում էր գործնական պարապմունքների ժամանակ կտրուկ ավելացնել իրավիճակային խնդիրների և կլինիկական դեպքերի քննարկումների թիվը:

Առաջարկությունների և դիտողությունների մեջ տեղ էին գտել նաև լուծարումների (լիկվիդ) քանակի սահմանափակման, երիտասարդ դասախոսների վերապատրաստման, մագիստրատուրայում պրոֆեսորի կամ դոցենտի փոխարեն կլինիկական օրդինատորների կողմից հաճախ իրականացվող դասավանդումների, նմանատիպ ամբիոնների ռոտացիաների, որոշ առարկաների դեպքում (հիմնականում դեղագիտական)՝ տոկոսներով և տարեթվերով հագեցած թեստերի մեծ քանակների և գրքերում կամ պատճեններում տեղ գտած սխալների վերաբերյալ հարցերը:

Կենտրոնը հուսով է, որ հաջորդ հարցումների ժամանակ ուսանողների կողմից բարձրացված հարցերը կլինեն ավելի հստակ, հասցեագրված և կառուց-

վածքային, ինչը կօգնի մեզ՝ համալսարանի ղեկավարությանը և ստորաբաժանումներին ներկայացնել բարեփոխումների ավելի կոնկրետ առաջարկներ:

Ցանկանում են տեղեկացնել, որ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցման տվյալներն ամենայն ուշադրությամբ քննարկվում են «Դասախոսների որակավորման» հանձնաժողովում՝ դասախոսների համար հայտարարված մրցույթին մասնակցելու ժամանակ տվյալ հանձնաժողովի երաշխավորությունը ստանալու համար:

Փաստենք, որ այն դասախոսները, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում այս հարցման արդյունքներով չեն հավաքում պահանջվող դրական նիշը՝ կամ չեն երաշխավորվում որակավորման հանձնաժողովի կողմից, կամ նրանց հետ պայմանագիրը 5 տարվա փոխարեն կնքվում է 1 տարով՝ այդ 1 տարին դիտարկելով որպես փորձաշրջան՝ տվյալ հարցման պահանջները բավարարելու պայմանով:

Ի դեպ՝ վերջին մեկ տարվա ընթացքում 8-ից ավելի դասախոսներ չեն հաղթահարել մրցույթը կամ նրանց հետ աշխատանքային պայմանագիրը կնքվել է մեկ տարով՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցման բացասական արդյունքի պատճառով:

ԼԱՐԻՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՊԲԳ ուսման որակի գնահատման և վերահսկման կենտրոնի ղեկավար

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԵՊԲԴ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Է ՆՇԱՆԱԿԻՄ ՊՐՈՖ. ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԵՆԿՈՅԱՆԸ

ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ՀԱՂԹԵԼՈՒ ԱՆԿՈՏՐՈՒՄ ԿԱՄՔՈՎ

Անառարկելի է այն փաստը, որ բժշկական համալսարանում միշտ առանձնահատուկ ուշադրության են արժանացել և արժանանում շնորհալի և ստեղծագործական հակումներ դրսևորող ուսանողները:

Նման ուսանող է եղել նաև իմ այսօրվա հյուրը՝ ԵՊԲԴ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Ենկոյանը:



- Նախ՝ շնորհավորում ենք բժշկական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր **նշանակվելու կապակցությամբ: Որքան տեղյակ եմ՝ ձեր դասախոսական գործունեությունը սկսվել է դեռևս ուսանողական տարիներին, վերհիշեք, խնդրեմ, այդ հանգամանքը և ներկայացրեք այն:**

- Շնորհակալություն շնորհավորանքի և հարցազրույցի հրավերքի համար: Հիմա ոչ վաղ անցյալի մի փոքր հատվածի մասին, որը վերաբերում է ձեր հարցին. ես երկրորդ կուրսի ուսանող էի, երբ կենսաքիմիայի ամբիոնում սկսեցի զբաղվել գիտահետազոտական աշխատանքով: Երրորդ կուրսում համալսարանի հերթական գիտաժողովից մեկուսի մեկուսացրի իմ մեկ տարվա աշխատանքի արդյունքները, որը նվիրված էր նյար-

դային համակարգի որոշ ֆունկցիաների կենսաքիմիական մեխանիզմների բացահայտմանը: Գիտաժողովին ներկա էր նաև համալսարանի այդ տարիների ղեկավար Վիլեն Պարույրի Հակոբյանը, ով, հաջորդ օրն ամփոփելով գիտաժողովի աշխատանքները, շատ զեկուցումների շարքում առանձնացրեց նաև իմ զեկուցումը և, ինձ համար շատ անսպասելի, առաջարկեց ուսմանը զուգընթաց աշխատել համալսարանի ամբիոններից որևէ մեկում: Ես ընտրեցի կենսաքիմիայի ամբիոնը: Ավելի ուշ՝ ղեկավարի թույլտվությամբ, ես շարունակեցի կրթությունս ուսուցման անհատական գրաֆիկով՝ այն զուգորդելով ինչպես գործնական պարապմունքների, այնպես էլ դասախոսությունների վարման գործընթացով:

Սակայն ինձ շատ ավելի հոգե-

հարազատ էր գիտությունը, և ես իմ ամբիոնի վարիչի՝ պրոֆեսոր Միքայել Աղաջանովի անմիջական ղեկավարությամբ սկսեցի գիտության հրաշք աշխարհի առանձին խնդիրների ուսումնասիրման, իսկ հետագայում նաև՝ բացահայտման ոչ այնքան հեշտ, բայց միևնույն ժամանակ անասելի հետաքրքիր աշխատանքը: Շնորհակալ եմ իմ ուսուցիչներից:

- **Հավանաբար, ձեր տարիքի պրոռեկտոր բժշկական համալսարանը չի ունեցել, եթե սխալվում եմ՝ կարող եք ուղղել: Որպես երիտասարդ մասնագետ՝ ո՞րն էր համարում ծրագրային այն գործունեությունը, որը կդնեք ձեր աշխատանքի հիմքում:**

- Անկեղծ ասած՝ վստահ չեմ, որ ես ամենաերիտասարդ պրոռեկտորն եմ եղել (զուցե գիտության

բնագավառում, այո): Ինչևէ, եթե դա նույնիսկ այդպես է, ապա այն խիստ պարտավորեցնող է:

Ինչ վերաբերում է ծրագրային գործունեությանը՝ ապա պետք է նշենք, որ իմ հիմնական նպատակը համալսարանում գիտական միջավայրի ստեղծումն է՝ միջավայր բառի խոր ընկալմամբ: Դրան հասնելու համար բազմաթիվ խնդիրներ պետք է լուծել, որոնցից են կարևորում են բարձր պրոֆեսիոնալիզմը և սերը գիտության նկատմամբ, որոնց ապահովումը ենթադրում է քրտնաջան աշխատանք (աշխատասենյակների լույսերը պետք է վառ լինեն մինչև երեկոյան ժամը 7-ը, 8-ը և անհրաժեշտության դեպքում ավելին), շաբաթ և կիրակի օրերին համալսարանի դռները պետք է բաց լինեն. գիտնականի օրը նորմավորված չպետք է լինի: Ես շատ լավ հասկանում եմ, որ կան շատ օբյեկտիվ պատճառներ նույնպես, բայց և ուզում եմ հավատալ, որ ելնելով անցյալի մեր լավ ավանդույթներից, ինչպես նաև օգտագործելով ժամանակակից լայն հնարավորությունները և մեծ կամք դրսևորելով՝ մենք, թեկուզև մի քանի տարիների ընթացքում, կարող ենք ստեղծել այն գիտական միջավայրը, որը ես պատկերացնում եմ:

- Ինչո՞վ եք կարևորում բուհական գիտության դերը, ինչո՞վ է այն տարբերվում ակադեմիական, գիտահետազոտական հաստատություններում տարվող գիտական աշխատանքներից:

- Ժամանակակից գիտությունը՝ ինչպես Արևմուտքում, այնպես էլ ԱՄՆ-ում և Ռուսաստանում, հիմնականում իրականացվում է ակադեմիական միջավայրում: Գիտության քաղաքականության թելադրողը համալսարաններն են: Աշխարհում շատ քիչ են գիտահետազոտական այն ինստիտուտները, որոնք գործում են համալսարաններից դուրս: Ինչու՞. որովհետև գիտության առաջընթացն ապահովում է առաջընթաց կրթության մեջ և հակառակը: Բժշկական կրթության դեպքում այն էլ ավելի ակնառու է. աշխարհում համալսարանական կլինիկաներն ապահովում են սպասարկման բարձր որակ, որովհետև այնտեղ են խաչվում գիտությունը, կրթությունը և դրանց գործնական կիրառումը:

- Պատմե՞ք ձեր կյանքից հետաքրքիր դրվագներ, որոնք հետաքրքիր կլինեն ուսանողության համար:

- Վերևում, երբ ես խոսում էի գիտական միջավայրի մասին, ի նկատի ունեի, որ այդ միջավայրում իր հստակ տեղը պետք է ունենա նաև ուսանողը: Իմ ուսանողական փորձից ելնելով՝ ես վստահ կարող եմ ասել, որ ո՛չ կրթությունը և ո՛չ էլ գիտությունը չեն կարող կտրել (եթե ոչ նպաստել) ուսանողին իր ուսանողական կյանքից: Ինձ համար այնքան կարևոր, իմաստալից և հետաքրքիր դպրոց էր ուսանողական ակտիվ միջավայրը, որ ես մինչ այսօր էլ փորձում եմ լինել այնտեղ և շատ հարցերի մոտենալ մի քիչ այլ տեսանկյունից, լսել, սովորել և խորհուրդ տալ: Երբ ես երրորդ կուրսի ուսանող էի և արդեն աշխատում էի ամբիոնում, ուսանողական գարունների և աշունների փորձերը շատ դեպքերում անցկացնում էինք մեր ամբիոնի միջանցքներում: Շատ լավ հիշողություններ ունեն այդ օրերի հետ կապված:

- Ո՞րն է ձեր արագընթաց վերելքի հիմքը: Կարծում եք՝ կարևոր է ուսանողի վարքագծում ձգտում ունենալը և ամեն գնով ծրագրվածն իրականացնելը:

- Ես կարծում եմ, որ իմ որոշակի հաջողությունների հիմքը, առաջին հերթին, իմ ծնողներից ինձ փոխանցված գեներն են և հետո

նաև աշխատասիրությունը, որովհետև ինչքան էլ ի վերուստ օժտված լինես, եթե չունենաս բարձր աշխատասիրություն, որևէ լուրջ հաջողության չես կարող հասնել: Ես կարևորում եմ նաև բաց լինելը, լսելու ունակությունը և խնդիրներ լուծելու կարողությունը:

- «Ապագա բժշկի» էջերում ձեր մասին գրվել է դեռևս ուսանողական տարիներին: Որքանո՞վ է փոխվել ուսանող Կոնստանտին Ենկոյանը պրոֆեսոր և պրոռեկտոր Կոնստանտին Ենկոյանից:

- Շատ բանով չեմ փոխվել: Փոխվել եմ միայն արտաքինապես. հիմա ավելի հաճախ եմ կրում փողկապ (ծիծաղ), ավելի բարձր պատասխանատվությամբ եմ մոտենում վերլուծությունների, եզրահանգումների և որոշումների կայացմանը:

- Ձեր հրապարակային խորհուրդը ուսանողներին:

- Ուզում եմ, որ ուսանողներն իրենց ժամանակը նպատակային օգտագործեն, ակտիվ լինեն և՛ ուսանողական, և՛ հասարակական կյանքում (այս վիրտուալ կյանքում ավելի շատ լինեն մարդկային շփումները) և հասկանան, որ ուսանողական տարիներին ստացած որակները կապահովեն իրենց հետագա բարվոք ապագան: Կուզենայի համալսարանի բակում ավելի շատ տեսնել հաստատիրոջ գրքերը ձեռքերին և իրար հետ ակտիվ քննարկումներ իրականացնող ուսանողների:

- Շնորհակալություն հարցազրույցի համար: Հուսով եմ՝ ձեր բոլոր ցանկությունները կիրականան մոտ ապագայում:

Հարցազրույցը՝
ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ «ՄՈՒՐԱՑԱՆ»

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ՏԻԿԻՆՆ ԱՅՑԵԼԵՑ «ՄՈՒՐԱՑԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Ամանորից առաջ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի մանուկներին իր այցով հաճելի անակնկալ մատուցեց Հայաստանի Հանրապետության նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը, ով ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի հետ այցելել էր մանկական հիվանդանոց՝ շնորհավորելու երեխաների Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Տիկնոջն ուղեկցում էին նաև «Նվիրիր կյանք» հիմնադրամի իր գործընկերները:

Նախագահի տիկինը նախ մասնակցեց «Մուրացան» հիվանդանոցում բուժվող մանուկների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսին, ապա անձամբ վարեց Նոր տարվա տոնական միջոցառումը:

Ամանորի հանդեսին մանուկներին շնորհավորելու էին եկել «Կոմպաս» բենդը և «Մանկական Եվրատեսիլ-2014» միջազգային մրցույթում Հայաստանը ներկայացրած Բեթին, իսկ «Վաղորդյան կաթիլներ» երգչախումբը կատարեց նաև տիկին Ռ. Սարգսյանի հեղինակած «Արև ենք մենք» երգը, որին միացան դահլիճում գտնվող երեխաները:

Տոնական համերգից հետո մանուկներին հյուր եկավ Ձմեռ պապը, ով նվերներ հանձնեց նրանց:

Այնուհետև ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը՝ առողջապահության զարգացման և մանկական առողջապահության մեջ մեծ ներդրում ունենալու համար «Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ տիկին Ռիտա Սարգսյանին շնորհեց Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ոսկե մեդալ, շնորհակալագրեր հանձնեց ճանաչված երգահան Սարինե Ալեսին, «Նվիրիր կյանք» բարեգործական հիմնադրամին՝ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի մանկական արյունաբանության և քիմիաթերապիայի բաժանմունքների հետ համագործակցելու համար:



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆՂԱՆՈՑՈՒՄ



Մուրացան համալսարանական հիվանդանոցում բուժվող մանկահասակ երեխաների համար նախատոնական անակնկալ էին պատրաստել նաև «Ջերացի» ավագ դպրոցի բնագիտական հոսքի կենսաքիմիական ենթահոսքի աշակերտները, ովքեր աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպել էին բարեգործական համերգ և ցուցահանդես-վաճառք, որից ստացված հասույթը որոշել էին ծառայեցնել բարեգործական նպատակների: Նպատակն իրականացնելու համար աշակերտներն այցելել էին «Արաբկիր» բժշկական և Ռ.Յուլյանի անվան արյունաբանական կենտրոններ, այնուհետև՝ ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիր:

Ամանորի միջոցառման ավարտին «Մուրացան» հիվանդանոցային համալիրում բուժվող մանուկներին նվերներ բաժանեցին «Ջերացի» ավագ դպրոցի աշակերտները: Այցի նպատակն էր ապագա բժիշկների մոտ ձևավորել մարդկային հոգուն բնորոշ կարեկցանքի, հոգատարության, սրտացավության զգացումներ, ինչպես նաև Ամանորին և Սուրբ Ծնունդին ընդառաջ մի փոքր ժպիտ պարզաբեր առողջական ծանրագույն խնդիրներ ունեցող մանուկներին և իրենց հասակակիցներին:

Նշենք նաև, որ աշակերտների բարեգործական առաքելությունը չսահմանափակվեց միայն հիվանդանոցային այցերով: Իրենց իսկ նախաձեռնությամբ և մեծ ոգևորությամբ նրանք պատրաստականություն հայտնեցին աջակցել և իրենց լուծման ներդնել Գյումրիում ապրող բազմազավակ, անապահով ընտանիքի օգնության գործուն (ընտանիքի մասին տեղեկացել էին «Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» ծրագրից): Բարեգործական ամանորյա միջոցառումներ իրականացրին «Մուրացան» հիվանդանոցում նաև պարարվեստի և գեղարվեստի ուսումնարանների սաները, ովքեր իրենց պարային և երաժշտական կատարումներով ուրախացրին հիվանդ երեխաներին:



ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ԿԱՐԱՊԵՏ ԴԵՂԾՈՒՆՅԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (1924-1999)

մաճարակաբանության ամբիոնի պրոֆեսոր Զասմիկ Զովհաննիսյանը: Իրենց ուսուցչի մասին նրանց խոսքը ոչ միայն պարունակում էր անվանի գիտնականի գործունեության ժամանակագրությունը, գնահատականները, այլև ներկայացնում մարդ-անհատի, հրաշալի անձնավորության, գիտնական, մանկավարժ, հասարակական գործիչ Կ. Դեղծունյանի անձը: Նրա կենսագրության ոչ մասնագի-



Իր ուսուցչի նկատմամբ վերաբերմունքը ամենից լավ է բնութագրում անհատին: Զատկապես այն ուսուցչի, ով տվյալ անհատի կյանքում ոչ միայն մեծ դերակատարում է ունեցել ուսուցանելու, ուղղորդելու առումով, այլև նպաստել է իր ընտրյալ սանի կայացմանը:

Դեռևս իրենց կազմավորման վաղ շրջանում բոլոր ժողովուրդները մեծ սեր և խորին հարգանք են ունեցել ուսուցչի հանդեպ:

Հիպոկրատի երդման տողերը՝ ժամանակի ոգուն համապատասխան, դրա ամենացայտուն վկայությունն են. «Բժշկության արվեստն ինձ սովորեցնող ուսուցչիս երդվում եմ պաշտել ծնողներիս հավասար, նրա հետ կիսել իմ ողջ կարողությունը ու հոգալ նրա կարիքները, նրա որդիներին համարել իմ եղբայրները, և եթե նրանք կամենան, սովորեցնել բժշկական արվեստ անվարձահատույց և առանց գրավոր պայմանագրի: Իմ բոլոր գիտելիքները, դասախոսությունները և այլ դասավանդման եղանակները երդվում եմ հաղորդել իմ որդիներին, իմ ուսուցչի որդիներին, աշակերտներին...»:

Ուսուցչի մեծարման յուրօրինակ միջոցառում էր ճանաչված համաճարակաբան, անվանի գիտնական, մեծ հայրենասեր, պրոֆեսոր Կարապետ Դեղծունյանի 90-ամյակին նվիրված կոնֆերանսը, որի նպատակն էր ոչ միայն մեծարել, հարգանքի տուրք տալ անվանի ուսուցչին, այլև խոսել այն գիտության և նրա զարգացման մասին, որին իր ողջ գիտակցական կյանքը նվիրեց ճանաչված գիտնականը:

Միջոցառման նախաձեռնողները Կ. Դեղծունյանի աշակերտներն էին՝ ԵՊԲՀ հետդիպլոմային ուսուցման գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Արմեն Զամբարծումյանը և հա-

տական, սակայն շատ կարևոր բնագավառներից մեկը վերաբերում էր արտասահմանցի ուսանողների հետ աշխատելու ժամանակահատվածին՝ 1964-72թթ. արտասահմանցի ուսանողների նորաստեղծ դեկանատում դեկան աշխատելու տարիներին:

Սկսած 1971-ից՝ շուրջ 20 տարի ղեկավարելով համաճարակաբանության և բժշկական մակարուծության ամբիոնը՝ պրոֆեսոր Դեղծունյանը մեծապես կարևորում էր ուսանողների, հատկապես արտասահմանցի ուսանողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքը:

«Արտասահմանցի ուսանողները, ովքեր այդ ժամանակ միայն սփյուռքահայերն էին, չափազանց ջերմ և մտերիմ փոխհարաբերության մեջ էին իրենց դեկանի հետ,- իր ելույթում նշեց ԵՊԲՀ հնաբնակներից մեկը՝ Ալբերտ Զարությունյանը, ով երկար տարիներ աշխատել է Կ. Դեղծունյանի հետ,- նա միջոցառումներ էր կազմակերպում սփյուռքահայ ուսանողների համար, նրանց հետ երգում էր, մասնակցում էր քսկուրսիաների: Սփյուռքահայ ուսանողները, հանձինս նրան, տեսնում էին իրենց մտերիմին: ճարտարապետության, նկարչության, երաժշտության մեծ գիտակ էր, սիրում էր միջոցառումների ժամանակ երգել իր նշանավոր «Դէ Յամանը», որը մեզ էր փոխանցում վանեցու զավակի կարոտը իր երգիի նկատմամբ: Չափազանց սերտ կապեր ուներ ժամանակի ճանաչված մտավորականների հետ, երկար տարիներ հանդիսանում էր «Վասպուրական» հայրենակցական միության փոխնախագահը: Իսկ որպես մասնագետ շատ բարձրակարգ համաճարակաբան էր, շատ կարճ ժամանակամիջոցում, շատ ծանր իրավիճակներում անթերի բացահայտում էր համաճարակի աղբյուրը: Նա համաճարակաբանության



դպրոց է ստեղծել: Մեծ պատկառանք ուներ իր ուսուցչի՝ Արտո Ալեքսանյանի հանդեպ և մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի համաճարակաբանության ինստիտուտը կոչվի իր ուսուցչի անվամբ, ծննդատեղում տեղադրվի Արտո Ալեքսանյանի կիսանդրին: Ուսուցչի հանդեպ մեծ վերաբերմունքը նա փոխանցեց իր լավագույն սաներից մեկին՝ Արմեն Չոնիկի Չամբարձումյանին, ով Կ. Դեղձունյանի երկարատև հիվանդության ժամանակ ցուցաբերում էր այնպիսի հոգատար և ուշադիր վերաբերմունք, որպիսին կարող էր անել բարձր նկարագրի տեր անձը»:

Անվանի գիտնականի, ծանաչված մասնագետի կենսագրական տվյալները, որոնք թվարկեցին ելույթ ունեցողները, չափազանց ընդգրկուն են, և մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ դրանք թվարկել: Միայն նշենք, որ 1971-ից սկսած՝ շուրջ 25 տարի, նա հանդիսացել է Հայաստանի համաճարակաբանների, մանրէաբանների և մակաբուծաբանների գիտական ընկերության նախագահ: 1976-ին նրա անմիջական ղեկավարությամբ ամբիոնում ստեղծվում է գիտահետազոտական լաբորատորիա, որը միակն էր Անդրկովկասում, և դարձավ համաճարակաբանների որակավորման կենտրոն: 1978-ին Կ. Դեղձունյանը նշանակվում է Ա. Ալեքսանյանի անվան գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն՝ մինչև 1985-ը շարունակելով հասարակական հիմունքներով ղեկավարել բժշկական ինստիտուտի համաճարակաբանության և բժշկական մակաբուծության ամբիոնը: Նույն տարիներին նշանակվում է հանրապետության գլխավոր համաճարակաբան՝ երկար տարիներ հանդիսանալով համամիութենական նույնանուն գիտական ընկերության վարչության անդամ:

Կոնֆերանսում հնչեց նաև համալսարանի ռեկտորի հիշողությունը՝ կապված մասնագիտական առարկայի կիսանյակային քննության հետ. «Սիրելի գործընկերներ, ուսանողներ, հարգարժան հյուրեր, մենք շարունակում ենք շարքը, որը նպատակ ունի մեր ավանդույթները պահպանելու և զարգացնելու: Մենք հիշատակելու ենք մեր ուսուցիչներին, խոսելու ենք այն ուղղությունների զարգացման մասին, որոնք այս մարդիկ հիմնադրել են մեր ԲՈւՀ-ում: Դա շատ կարևոր և անհրաժեշտ երևույթ է, և կարծում են, որ այն այսօր ունի հետևյալ նպատակը. մեծարել, հիշել, հարգանքի տուրք տալ անվանի էպիդեմիոլոգին և ուսուցչին, խոսել նաև այն գիտության էպիդեմիալոգիայի մասին, որը պրոֆեսոր Դեղձունյանը ներկայացրել է տասնյակ տարիներ թե՛ ԲՈւՀ-ում, թե՛ Խորհրդային Միությունում: Նրա հեղինակությունը տարածվում էր շատ ավելի լայն ասպարեզում, քան միայն ԲՈւՀ-ը, կամ մեր հանրապետությունը:

Յուրաքանչյուր հոբելյանի ժամանակ միշտ հիշվում են հետաքրքիր դեպքեր հոբելյարի կյանքից, ես էլ ինձ թույլ կտամ մի դրվագ ձեզ պատմել, ինչը բավականին հետաքրքիր հետք թողեց իմ կյանքում: Պրոֆեսոր Դեղձունյանի հետ շատ մտերիմ էր հայրս: Ես ցանկանում եմ պատմել մի հետաքրքիր դեպք, որը տեղի ունեցավ իմ քննության ժամանակ, երբ Կարո Միհրանիչը և ինֆեկցիոնիստները «էպիդեմիալոգիա» և «Միկրոբիոլոգիա» առարկաներից քննությունը միասին էին ընդունում: «Միկրոբիոլոգիա» առարկայի մասում հնչեց մի ազգանուն՝ Գվարների: Նա մանրէաբանության մեջ հեղինակություն ունեցող գիտնական էր: Նրա գործունեությանը վերաբերող հարցերին ես ճիշտ պատասխանեցի, որից հետո պրոֆեսոր Դեղձունյանը հարցրեց. «էլ ի՞նչ Գվարների գիտես»: Այն ժամանակ ես շատ էի տարված ֆուտբոլով և

գիտեի, որ Իտալիայի հավաքականի կազմում կար այդ եզրային հարձակվող Արիստիդե Գվարների անունով խաղացող: Ես պատասխանեցի՝ այո, կա մեծ անձնավորություն և տվեցի այդ ֆուտբոլիստի անունը: Պր. Դեղձունյանը ասաց՝ լավ, բայց ես ի նկատի ունեի ջութակի վարպետ Գվարներիին, ով մրցակցում էր Ստրադիվարիուսի հետ: Պրոֆեսորը հիշեց ֆուտբոլիստ Գվարներիին, ես հիշեցի վարպետ Բարտոլոմեո Գվարներիին: Բոլորս գիտեինք գիտնական Գվարներիի մասին: Սրանով ես ցանկանում եմ ևս մեկ անգամ փաստել բանավոր քննության նշանակությունը»:

Միջոցառման երկրորդ մասը գիտական նստաշրջան էր, որի ընթացքում կոնֆերանսի մասնակիցները ներկայացրին զեկուցումներ, որոնց քննարկումներն անցան գիտական բարձր մակարդակով:

Ս. ԹՈՐՈՍԱՆ

Է՝ áĕáóŷ ĩăăĕ³ŷĭ³ñŷ»ñã ³é³ŷó Ū³ĭ³. ñăăĀ ĩăóŷŷ»ñĈ



ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՓՐԿԵԼ ԵՄ ԲԱԶՄԱԹԻՎ ԿՅԱՆՔԵՐ...



Ծնվել եմ Կամո քաղաքում՝ ներկայիս Գավառում, ծառայողի ընտանիքում: Հայրս դեղագործ էր, մայրս՝ մանկավարժ: Ի դեպ՝ հայրս այն ժամանակ համարվում էր առաջին դիպլոմավոր՝ բարձրագույն կրթություն ստացած դեղագործներից մեկը:

Հիշում եմ՝ հայրս ասում էր, որ այդ ժամանակ Հայաստանի Հանրապետությունում կար ընդամենը 2 բարձրագույն կրթություն ստացած դեղագործ:

Բժշկությունը՝ հատկապես վիրաբուժությունն ընտրելու հարցում ինձ ուղղորդեց իմ կյանքում տեղի ունեցած մի դեպք: Իմ ընկերներից մեկի հորեղբայրը վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց, և նրան արյուն էր անհրաժեշտ: Մենք ընկերներով գնացինք արյուն հանձնելու, որպեսզի փրկելինք նրա կյանքը: Այդ ժամանակ ես տեսա վիրաբույժների աշխատանքը և «սիրահարվեցի» վիրաբուժությանը:

Իսկ մինչ այդ շատ էի տարված ավիացիայով և ցանկանում էի օդաչու դառնալ: Այդ դեպքից հետո վիրաբուժությունը դարձավ իմ կյանքի իմաստը:

Աշխատել եմ տարբեր վայրերում՝ 1978-83 թթ.-ին՝ Կամո քաղաքի հիվանդանոցում, 1983-85 թթ. Մոսկվայում անցել եմ օրդինատուրա, իսկ 1985-88 թթ.՝ ասպիրանտուրա՝ Վիշնևսկու ղեկավարությամբ:

Մեր օրերում շատ է զգացվում լավ ու հոգատար բժիշկների կարիքը: Չէ՞ որ մարդկային կյանքն ամենաթանկն է աշխարհում: Փրկել կյանքեր, ցավոք, ոչ միշտ է հաջողվում: Նման դեպքերում մենք առաջին հերթին մեղքը բարդում ենք բժիշկների վրա: Սակայն, եկեք մի պահ հիշենք, որ բժիշկը նույնպես մարդ է՝ իր ուժեղ ու թույլ կողմերով: Մեր սերնդի ապագա բժիշկներին այսօր դասավանդում և իրենց մարդկային ու բարձր պատասխանատվության, բարոյական արժեքների ընկալման օրինակով դաստիարակում են ավագ սերնդի ներկայացուցիչները: Նրանք էլ, իրենց հերթին շատ բան են սովորել իրենց փայլուն դասախոսներից: Ներկայիս ավագ սերնդի վաստակաշատ բժիշկներից է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ 3 վիրաբուժության ամբիոնի պրոֆեսոր և «Էրեբունի» բժշկական կենտրոնի թորակալ վիրաբուժության կլինիկայի ղեկավարը՝ Արտակ Կառլենի Հովհաննիսյանը, ով վերջերս մշտեց իր 60-ամյա հորեղբայրը: Նա նույնպես շարունակում է իր ուսուցիչների ավանդը և կրթում ու դաստիարակում է մեր ուսանողներին իր անձնական օրինակով: Իմ հարցազրույցը նրա հետ բացահայտեց բժշկի մարդկային որակները, այս կյանքի հանդեպ նրա լավատեսական հայացքները:

- Պարզաբանեք, խնդրեմ, ի՞նչ է մշանակում թորակալ վիրաբուժությունը:

- Թորակալ վիրաբուժությունը կրծքավանդակի և կրծքավանդակի օրգանների վիրաբուժությունն է՝ բացառությամբ սրտի վիրաբուժության, որն արդեն առանձին մասնագիտություն է: Մնացած մյուս օրգանները՝ սկսած թոքերից, միջնորմից, ստոծանուց, կերակրափողից, բրոնխներից մինչև կրծքավանդակի պատի հետ կապված բոլոր պաթոլոգիական պրոցեսները մտնում են թորակալ վիրաբուժության մեջ: Այս գիտությունը չափազանց բարդ է, որը լայնածավալ վիրաբուժական միջամտությունների մեծ սպեկտր է պարունակում: Բացի դրանից՝ պարունակում է որոշակի թերապևտիկ կողմեր: Կան այնպիսի հիվանդություններ, որոնք համարվում են վիրաբուժական. օրինակ՝ թոքերի սուր թարախակույտը մտնում է կրծքավանդակի վիրաբուժության պրոֆիլի մեջ, բայց բուժվում է կոնսերվատիվ եղանակով: Իհարկե՝ սուր արբեսներից հետո լինում են որոշակի բարդություններ, որոնք կարիք ունեն վիրաբուժական շտկման:

- Ո՞ր երկրներում եք եղել գործուղումներով:

- Եղել եմ Եվրոպայի տարբեր երկրներում, ԱՄՆ-ում: Մենք միշտ մասնակցում ենք կոնգրեսների, փորձի փոխանակման՝ հողվածների ձևով: Մասնակցել եմ նաև Ռուսաստանի Դաշնությունում տեղի ունեցող կոնֆերանսների, որտեղ ես շատ լավ ընկերներ ունեմ, ովքեր ինձ հետ են սկսել իրենց գիտական գործունեությունը դեռևս կլինիկական օրդինատուրայի և ասպիրանտուրայի տարիներին, և հիմա անվանի վիրաբույժներ են Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում: Կապը նրանց հետ կա, քանի որ ես հանդիսանում եմ նաև կրծքային վիրաբույժների եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ, և մենք միշտ հրավերներ ենք ստանում կոնգրեսների մասնակցելու, որոնք կազմակերպում է եվրոպական ասոցիացիան 2 տարին մեկ անգամ: Ճիշտ է՝ ժամանակի սղության պատճառով ոչ միշտ է ինձ հաջողվում ներկա լինել այդ կոնֆերանսներին, սակայն նման դեպքերում իմ ասիստենտներն են մաս-

1988-ին Մոսկվայում պաշտպանել են թեկնածուական թեզ, որը, իմիջիայլոց, այնպիսի թեզ էր, որ գիտ-խորհրդի անդամները միանգամից որոշեցին շնորհել դոկտորական աս-տիճան: Սակայն, ցավոք, այդ ժամա-նակ տեղի ունեցած աղետալի երկ-րաշարժը խոչընդոտ հանդիսացավ. մենք լծվեցինք մարդկային կյանքեր փրկելու գործին և մոռացանք գի-տության մասին:

Ինչևհից՝ ես իմ նպատակին հասա. հետագայում՝ 1999-ին, պաշտպանե-ցի դոկտորական թեզ: Պաշտպանու-թյան ժամանակ իմ աշխատանքը արժանացավ մեծ գնահատականի, որը և ընդունվեց նաև ամբողջ եվրո-պայում, քանի որ տարբեր առիթնե-րով՝ և՛ գիտաժողովների, և՛ սիմպո-զիումների, և՛ համագումարների ըն-թացքում այն արժանանում էր մեծ դրվատանքի:

2011-ին պարզատրվել են «Մար-շալ Բաղրամյան», «Դրաստամատ Կանայան», «Անբասիր Ծառայու-թյուն» շքանշաններով, ԵՊԲՀ ոսկե մեդալով:

Աշխատել եմ իմ գործում միշտ լի-նել անբասիր և անծնվեր սիրով նվիրվել եմ վիրաբուժությանը:

Իհարկե՝ գիտության, պրակտիկ գործունեության հետ մեկտեղ չեմ մոռացել նաև ժամանակ տրամադ-րել իմ ընտանիքին և ընկերներին:

Իմ կյանքը, ընդհանրապես, ես բա-ժանել եմ 3 հիմնական ուղղություն-ների, որոնք եռանկյան սման կապ-ված են միմյանց:

Առաջինը իմ ընտանիքն է, երկրոր-դը՝ գիտությունը և աշխատանքը, իսկ երրորդը՝ ընկերությունը: Եվ կարծում եմ՝ իմ կյանքը ես ճիշտ եմ դասավորել, քանի որ այդ երեք կարևոր բաղադրիչները չեն տուժել մեկը մյուսի պատճառով:

Արդեն 60 տարեկան եմ և չեմ զղ-ջում, որ վիրաբույժ եմ, ընդհակառա-կը՝ ես շատ հպարտ եմ, որ փրկել եմ շատ-շատ կյանքեր:

նակցում այդ գիտաժողովներին: Քանի որ գիտությունը միշտ առաջ է գնում, մենք աշխատում ենք, որ այժմյան նորագույն և բարձրագույն տեխնոլոգիաները օգտագործենք նաև Հայաստանում: Չնայած դա կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ. միայն մասնակցելով՝ հնա-րավոր է այդ վիրահատությունները կատարել, դրանք առաջացնում են նաև սարքավորումների և գործիքների մեծ խնդիրներ: Մենք աշխատում ենք իրագործել այդ նպատակները: Մասնավորապես՝ էնդոսկոպիկ վի-րաբուժությունը, որը օգտագործվում է կրծքավանդակի վիրաբուժու-թյան մեջ, այդ թվում՝ նաև թորակոսկոպիկ վիրաբուժությունը: Կարծում եմ, որ մենք հասնում ենք մեծ հաջողությունների:

- Երբևիցե ցանկություն չի՞ առաջացել ապրել և աշխատել արտասահ-մանում: Հիմա շատ բժիշկներ գնում են օտար երկրներ՝ ինքնահաս-տատվելու նպատակներով:

- Եթե անկեղծ լինեմ, երբեմն առաջացել է այդպիսի ցանկություն, բայց ինձ համար իմ երկիրը, իմ քաղաքը, իմ շրջապատը ավելի հարագատ են, քան դրսից հնչող գայթակղիչ հեռանկարները: Որոշակի հուսահատու-թյան պահեր եղել են՝ երբ մտածել եմ այդ մասին, բայց երբեք որևէ քայլ չեմ ձեռնարկել և հասկացել եմ, որ իմ հայրենիքն ինձ համար ավելի թանկ է՝ գունարած դրան և՛ դարաբաղյան պատերազմը, և՛ վիրավորնե-րը, որոնց մենք վիրահատում էինք, և մինչև հիմա ես վիրահատում եմ վի-րավորների, ովքեր ունեն ողնաշարային կոտրվածքներ և վնասվածք-ներ: Նրանք հիմա էլ դիմում են, քանի որ առաջանում են տարբեր բար-դություններ, և ես միշտ օգնում եմ նրանց՝ ապրել լիարժեք կյանքով: Մի-գուցե հենց սա է պատճառը, որ մեր աշխատանքները գնահատվեցին արտասահմանում, և շատ հաճախ՝ տարեկան 2-4 անգամ մեզ հրավի-րում են և՛ Ռուսաստանի Դաշնություն, և՛ Վրաստան: Անցած տարի ամռա-նը, Վրաստանի առողջապահության նախարարությունն ինձ հետ պայ-մանագիր կնքեց: Ես գնացի 10 վիրահատություն անելու, որոնք կատար-վեցին 2 շաբաթվա ընթացքում: Նմանատիպ կանչեր շատ են լինում, այն-պես որ՝ դրսում մեր աշխատանքի նկատմամբ կա որոշակի գնահատա-կան:

- Ձեր կարծիքով՝ մոտ ապագայում բժշկությունը մեզ մոտ կլինի՞ այն մակարդակի վրա, ինչպիսին Եվրոպայում է կամ ԱՄՆ-ում՝ թե՛ գիտելիքի մատուցման, թե՛ տեխնիկական հագեցվածության տեսանկյունից:

- Անկասկած այդպես կլինի: Դրա համար մեծ նախադրյալներ կան: Առաջինը՝ մեր ուսումնական պրոցեսը՝ սկսած իմ ուսանողական տարի-ներից և հիմա, պատրաստում է լայն պրոֆիլի մասնագետներ, որը ես դը-սում չեմ տեսել: Մենք ունենք հոյակապ վիրաբույժներ, բժիշկներ, մաս-նագետներ, որը բժշկության մակարդակը բարձր պահելու հիմքն է և եվ-րոպական բժշկությանը չզիջելու նախադրյալը: Այստեղ ամենակարևորը գիտելիքն է, որը կա: Երկրորդը՝ տեխնիկական հագեցվածության տեսա-կետից, եթե համեմատենք մի քանի տարի առաջ՝ հատկապես երկրաշ-արժից հետո և հիմա, ապա կտեսնենք, որ շատ մեծ տարբերություն կա: Եվ դա էլի խոսում է հօգուտ այն բանի, որ տեխնիկական հագեցվածու-թյան մակարդակը, որը կապված է ֆինանսական որոշակի միջոցների հետ՝ և՛ պետական, և՛ անհատական ներդրումների շնորհիվ, թույլ է տա-լիս նաև խոսել այն մասին, որ մենք կարող ենք չզիջել Եվրոպական ոչ մի երկրի բժշկությանը: Ուղղակի որոշ ֆինանսական խնդիրներ, հաշվի առ-նելով մեր երկրի իրավիճակը, շրջափակումը, տարանցիկ հակամար-տությունները, հնարավորություն չեն տալիս բարձր տեխնոլոգիաները, որոնք ստեղծվում են արտասահմանում, միանգամից ներդնել մեր բժ-շկության մեջ, սակայն հույս ունեմ, որ դրա ժամանակն էլ կգա: Էլի եմ կրկ-նում՝ գիտական պոտենցիալը և կլինիկական մտածելակերպը այնպի-սին է, որ պարտավոր ենք չզիջել ոչ մի երկրի բժշկությանը:

- Որքան տեղյակ եմ՝ դուք դասախոսություններ եք կարդում ուսանող-ների և օրդինատորների համար: Կարո՞ղ եք զուգահեռներ անցկացնել ձեր ժամանակվա և այսօրվա ուսանողների միջև:

- Համարվելով ԵՊԲՀ-ի թիվ 3 վիրաբուժական ամբիոնի պրոֆեսոր՝ դասավանդում եմ կրծքավանդակի վիրաբուժության ցիկլը՝ լեկցիոն կուրսի և գործնական պարապմունքների ձևով: Պետք է ասեմ, որ ես հի-ացած եմ մեր ուսանողներով, քանի որ, հատկապես գործնական պա-րապմունքների ժամանակ, տեսնում եմ, որ նրանք մեծ ակտիվություն են

ցուցաբերում, և շատ մեծ տոկոս է կազմում բանհմաց ուսանողների քանակը: Իսկ ինչ վերաբերում է համեմատություն անցկացնելուն՝ ասեն, որ այդ համեմատությունը նույնիսկ անհրաժեշտ է անցկացնել: Պետք է համադրել և դրա արդյունքում հասնել մի ճշմարտության: Համեմատությունն է, որ հանգեցնում է քննարկման առիթի ստեղծման, իսկ դա էլ իր հերթին կատարելագործում է ժամանակակից ուսման պրոցեսը: Մեր ժամանակ ուսումնական պրոցեսը չունի այսքան տեխնիկական հագեցվածություն, ինչ ունենք հիմա: Դասավանդման տեսակետից ժամահաշվարկներն ավելի շատ էին, ուսանողների ծանրաբեռնվածությունն ավելի շատ էր, քան հիմա է: Իհարկե՝ նոր տեխնոլոգիաների ներդրումներով՝ ինտերնետը, գրականությունը, որը մատուցվում է, շատ ավելի մատչելի է ներկայում, որը չկար մեր ժամանակ: Բայց այն ժամանակ կար մի պարզ ճշմարտություն. հնարավորությունները և ծանրաբեռնվածությունն ընձեռված էր այնպես, որ մենք ավելի շատ էինք պարապում և ժամանակ կորցնում՝ կարդալով տարբեր գրքեր ու գրականություն, որը հիմա չկա ուսանողների մոտ: Բայց, քանի որ այս նոր տեխնոլոգիաները կան, ուսանողների համար ավելի հեշտ է տեղեկատվություն ստանալը և ընկալելը: Հասարակ մի բան. մեր ժամանակ այս բոլոր տեխնոլոգիաները չկային, և հողված կամ նյութ գտնելու համար մենք պետք է նախօրոք պատվիրեինք, սպասեինք, մինչև այդ պատվիրված գրքերը բերեին, հետո ժամեր անցկացնեինք գրադարանում՝ կարդալով տարբեր գրքեր, հողվածներ ու մենագրություններ, որպեսզի վերջում կարողանայինք նյութ սարքել: Իսկ այսօր համակարգիչների միջոցով ուսանողը կարող է շատ կարճ ժամանակահատվածում տարբեր աղբյուրներից իր ցանկացած նյութը վերցնել և ծանոթանալ: Տարբերությունը մեր ժամանակների և ներկայիս ուսանողների միջև նաև այն է, որ այսօր ուսանողները շատ ավելի տեղեկացված են: Ես շատ եմ հպարտանում մեր երիտասարդությանը՝ նրանց գիտելիքների առումով, ուղղակի կցանկանայի, որ ավելի շատ ժամանակ տրամադրեին իրենց ստացած ինֆորմացիային լիովին տիրապետելու համար: Կան ուսանողներ, ովքեր այնպիսի բաներ գիտեն և այնպիսի մտքեր են արտահայտում, որ անկախ քեզանից զարմանում ես, թե նա որտեղից է տիրապետում այսքան ինֆորմացիայի: Սակայն նրանց կողքին հանդիպում են նաև ուսանողներ, ովքեր, բարեբախտաբար, շատ քիչ տոկոս են կազմում, որոնց վրա անգամ չարժե ուշադրություն դարձնել, ովքեր այս ինֆորմացիայի դարաշրջանում բացարձակապես նյութին չեն տիրապետում: Եվ այդ ժամանակ հասկանում ես, որ նրա հիմնական մտադրությունը հետագայում լավ բժիշկ դառնալը չէ, այլ ուղղակի դիպլոմ ստանալը: Կարծում եմ՝ եթե մարդը նվիրվում է իր գործին և ցանկանում է դառնալ մասնագետ, որ իր ընտանիքի բարեկեցությունը, իր ապրուստը ապահովի, պետք է չարչարվի: Եթե ընդունվել ես, պետք է սովորես և աշխատես կատարելագործվել:

- Սակայն, պետք է նշեմ, որ լինում են դեպքեր, երբ ձեր նշած «ոչ լավ» ուսանողը հասնում է ավելի բարձր պաշտոնների, քան մյուս ուսանողը, ով իրոք սովորում է, սակայն առաջ գնալու միջոցներ չունի: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Կարծում եմ՝ դրանք ժամանակավոր երևույթներ են: Ի վերջո՝ բժշկության մեջ գիտելիքն է մեծ դեր կատարում: Եթե վերցնենք միայն մեր հանրապետության մակարդակով, կլինիկաները և հիվանդանոցները, բուժհիմնարկները մրցույթ են հայտարարում, աշխատում են լավ բժիշկ-

ներին ներգրավել իրենց մոտ, քանի որ լավ մասնագետ, լավ բժիշկ ունենալով է այդ կլինիկան կամ հիվանդանոցն աշխատանք ապահովում և համբավ վայելում: Արտասահմանյան երկրներում կա քննությունների որոշակի սպեկտր, և բժիշկը պետք է հանձնի այդ քննությունը, որ կարողանա աշխատել: Ոչ բանհմաց բժշկին ոչ ոք չի ընդունի աշխատանքի, և գալու է այն ժամանակը, որ մեզ մոտ էլ է այդպես լինելու: Կարող եմ ասել, որ հիմա էլ արդեն արմատները երևում են: Առանց գիտելիքի բժիշկը բժիշկ չի կարող դառնալ, բացի այդ՝ ժամանակակից ինֆորմացիայի դարում բավական չէ միայն այն, որ բժիշկը սահմանափակվի իր իմացածով, լավ բժիշկը նա է, ով անընդհատ փնտրում է, գտնում է նորություններ, նորարարություններ, որ որոշակի բան ավելացնի իր գիտելիքների վրա, կատարելագործի դրանք: Փառք Աստծո՝ հիմա ժամանակներն այնպիսին են, որ եթե մարդը ցանկություն ունի, կարող է միանգամից քայլեր ձեռնարկել արտասահմանում սովորելու և կատարելագործվելու համար: Մեր սերնդի ուսանողները մնան հնարավորություններ չունեին, մենք չէինք կարող դուրս գնալ և սովորել ինչ-որ մեկի մոտ: Հիմա այդ ճանապարհը բաց է, և բառացիորեն 2 շաբաթում բժիշկը կարող է գնալ արտասահման իր նախասիրած կլինիկայում կատարելագործվի, նոր փորձ ձեռք բերի և վերադառնալով՝ այդ հմտությունները օգտագործի այստեղ: Մեր սերնդի ուսանողները, բացի Ռուսաստանից, այլ երկրներ գնալու շատ սահմանափակ հնարավորություններ ունեին: Ես հիմա բազմաթիվ ուսանողներ ունեմ, ովքեր իրենց օրդինատուրան ավարտելուց հետո գնում են այլ երկրներ՝ ավելի կատարելագործվելու և փորձ ձեռք բերելու: Նրանց մի մասը, ցավոք, մնում է այդ երկրներում, սակայն մեծ մասը հետ է վերադառնում: Իմ կարծիքով՝ դա էլ իր հերթին խթան կհանդիսանա, որ արտասահմանի և մեր բժշկությունների միջև տարբերությունը շատ քիչ լինի կամ ընդհանրապես չլինի: Բանհմաց բժիշկները մեզ մոտ գերազանցում են արտասահմանի բժիշկներին:

- Ի՞նչ կարևոր իրադարձություններ են կատարվել ձեր կյանքում վերջերս:

- Ես վերջերս նշեցի իմ 60-ամյա հոբելյանը, և այդ ընթացքում իմ ընտանիքում թռեհիկների ավելացում եղավ: Ունեմ նաև հորբի՝ ավիանոդելիզմը: Հայաստանում կա ավիանոդելիզմի ակումբ, ուր հաճախում եմ տարբեր մասնագիտության տեր անձինք, և հավաքվում է մի կոլեկտիվ, որը ամեն կիրակի գնում է թռիչքների իր իսկ ձեռքերով հավաքված անօդաչու կառավարվող սարքերով: Դա չափազանց հետաքրքիր և ինտելեկտուալ հոբբի է, և ես իմ մանկության երազանքը ինչ-որ ձևով իրականացնելու հնարավորություն ունեմ: Ազատ ժամանակս տրամադրում եմ դրան՝ ծանրաբեռնված աշխատանքային առօրյայից կտրվելու և ներքնաշխարհս փոխելու միտումով: Մեր հասակում ինչքան շատ հնարավորություններ լինեն կտրվելու աշխատանքից, այնքան թարմ ուժերով կվերադառնանք աշխատանքի և ավելի հստակ և կոնկրետ քայլեր կձեռնարկենք:

- Շնորհակալություն հարցազրույցի համար: Տա Աստված, որ դուք միշտ լինեք առողջ, որպեսզի կարողանաք բուժել ավելի շատ հիվանդների՝ պարզելով նրանց կյանքը լիարժեք վայելելու հաճույքը:

Հարցազրույցը՝
ԱԻՂԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ

ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱԶԿԵԼ ՀԻՆԳ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հայտնի են ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից 2015 թվականին ֆինանսավորման երաշխավորված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի «Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցություն» և «Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցություն» ենթածրագրերի ցանկերը:

Ուրախ ենք տեղեկացնել, որ Երևանի Մխիթար Հեռացու անվան պետական բժշկական համալսարանը 2015 թվականի ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն կստանա հինգ միջոցառման անցկացման համար, որոնց թվում են ԵՊԲՀ տարե-

կան հաշվետու գիտաժողովը, Սևծովյան երկրների 9-րդ նյարդավիրաբուժական կոնգրեսը, «Դրամաշնորհին դիմելու արվեստը» խորագրով երիտասարդ գիտնականների դպրոցը:

Հաճելի է արձանագրել, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից ֆինանսավորված երեք գիտական միջոցառումների փոխարեն այս տարի ֆինանսական աջակցություն կստանա հինգ միջոցառում:

Այս փաստը ևս վկայում է գիտական միջոցառումների բնագավառում մեր ունեցած ձեռքբերումների և դրանց թվաքանակի դինամիկ աճի մասին:

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ



Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կրթաթոշակների տրամադրման մրցույթ: Մրցույթին կարող են մասնակցել պետական ԲՈՒՀ-երի առկա ուսուցման առաջին կուրսերի՝ անվճար համակարգում չընդգրկված ուսանողները:

Հայտատու ուսանողը պետք է բավարարի նշված պահանջներից առնվազն մեկը՝ սոցիալապես անապահով (ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող) ընտանիքների անդամ, միակողմանի ծնողազուրկ, երրորդ խմբի հաշմանդամ, հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի բնակիչ, տվյալ ուսումնական տարվա կի-

սամյակի քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող, հասարակական ակտիվություն ցուցաբերած, պատշաճ վարքագիծ դրսևորող ուսանող:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետը 2015 թվականի փետրվարի 3-ն է:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը ՀՀ կառավարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ կփոխհատուցի ՀՀ սահմանամերձ (սահմանապահ) համայնքներում բնակվող և պետական բուհերի առկա ուսուցման համակարգի բակալավրիատում սովորող ուսանողների տվյալ կիսամյակի ուսման վարձը: Հայաստանի երիտասարդական հիմնադրամին կարող են դիմել Տավուշի մարզի

Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Չինարի, Այգեպար, Այգեծոր, Բերքաբեր, Վերին Կարմիրաղբյուր, Վայոց ձորի մարզի Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ, Խաչիկ սահմանամերձ համայնքների պետական բուհերի առկա ուսուցման համակարգի բակալավրիատում սովորող ուսանողները: Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետը 2015թ. փետրվարի 13-ն է:

Դիմումներն ու անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գրասենյակում (հասցե՝ ք. Երևան, Տերյան 74), ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-17.00 (ընդմիջման ժամն է՝ 13.00-14.00):


ԵԶԱԿԻ ԴԵՊՔ «ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Արաբկիր» բժշկական կենտրոնում մի քանի ասական աղջիկ երեխայի մոտ հղիություն հիշեցնող դեպք է հայտնաբերվել: Ծնողները բուժկենտրոն են դիմել այն բանից հետո, երբ երեխայի որովայնի մեծացում են նկատել: «Արաբկիր» բժշկական կենտրոնի գիտական ղեկավար Արա Բաբլոյանը, հաստատելով փաստը, ասել է. «Երեխայի հետ տեղի ունեցածը չի կարելի որակել հղիություն: Կարելի է ասել՝ մի քանի տասնյակ հազար ծնունդներից մեկի մոտ է պատահում, որ պտուղը պտղի մեջ է լինում, այսինքն՝ զույգ է բեղմնավորվել, բայց երկրորդ պտուղը

հայտնվել է առաջին երեխայի որովայնի մեջ: Վիրահատության ժամանակ պարզվել է, որ հայտնաբերվածը անհաս, ոչ ճիշտ կազմավորված պտղի հատված է՝ մարմնով, ոտքերով, բայց առանց գլխի: Սա առանձնահատուկ դեպք է, և «Արաբկիր» բժշկական կենտրոնի համապատասխան բժիշկները պատրաստվում են այն ներկայացնել միջազգային բժշկական համրությանը, որպեսզի մարդիկ տեղեկանան, որ ման դեպքեր լինում են: Բարեբախտաբար, ամեն ինչ նորմալ է, երեխան լավ է»:

ԻՄ ԳԵՐԵՋՄԱՆԻՆ ԴՈՒՔ ՉՄՈՏԵՆԱՔ...

Մեր այն հանճարներից մեկը, ում գերեզմանատեղին նույնպես անհայտ մնաց...



ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ
Դիմանկարը՝ Սարտիրոս Սարյանի

Ջավախքի Ախալքալաքի գավառի Գանձա գյուղի քահանա Սուքիաս Տեր-Գրիգորյանի բազմանդամ ընտանիքի 11-րդ զավակ Վահանը՝ ապագա բանաստեղծ Վահան Տերյանը, մեր մեծանուն մտավորականներից է:

Դժվարին կյանք ապրեց Վահան Տերյանը, կյանքից հեռացավ շատ անժամանակ, բայց հայ քնարերգությանը հաղորդեց մի այնպիսի թարմ շունչ, որ անհնարին է պատկերացնել իր և հետագա ժամանակների հայ պոեզիան առանց նրա լուսավոր ներկայության: Տերյանն անփոխարինելի է նաև նրանով, որ առաջին իսկ գրքով ստեղծեց հետևորդների մի մեծ խումբ, որի ներկայացուցիչները ձևավորեցին Վահան Տերյանի գրական դպրոցը: Գեղարվեստական ճանապարհ բաց անող այդպիսի մշակութային առաքելություն շատ քչերին է վիճակվում: Ահա այդ քչերից մեկը Վահան Տերյանն է:

Ստեփան Ջորյան. «Վահան Տերյանն այն բախտավոր հեղինակներից էր, որոնք մի առավոտ գարթում են հայտնի դարձած, և դա ոչ թե պատահականության բերումով, այլ շնորհիվ իրենց մեծ տաղանդի: Նրա առաջին իսկ գիրքը՝ ութսուն էջանոց «Սթնշաղի անուրջները», հռչակեց նրան որպես բանաստեղծ և պատվավոր տեղ ապահովեց հայկական Պառնասում»:

Լազարյան ճեմարան այցելած Ավ. Իսահակյանը հիշում է. «Ինձ շրջապատեցին մի քանի ուսանող աշակերտներ, որոնց մեջ էր Վահանը: Բոլորն ինձ հարցեր էին տալիս և հարցերիս պատասխանում: Վահանը լուռ ու անխոս հետևում էր մեզ՝ աչքը վրայիցս չհեռացնելով: Երբ խոսք էի ուղղում նրան, կարծում էր ու շփոթվում: Վահանը ձեռքս ամուր սեղմեց և շշմուշակ մնաք բարին, շատ ուրախ եմ, որ Ձեզ տեսա: Ես հրավիրեցի նրան ինձ մոտ»: Մի երկու օր հետո Վահանը ընկերոջ հետ այցելում է Ավ. Իսահակյանին, ցույց է տալիս մոմլաթե կազմով հաստ տետրը, որի վրա դանակի ծայրով փորագրված էր. «Արիւն»: «Մի՞թե արյան բանաստեղծություններ ես գրում», - հարցնում են ես, սակայն իմ տարակուսանքը փարատվում է, երբ վերջից կարդում են «Նիւրա (Նյուրա)»: Ճեմարանի

տեսուչ Վասիլ (Բարսեղ) Գասպարյանի դուստր Աննային կոչում էին նաև Նյուրա, ում նկատմամբ Տերյանը սեր է ունեցել:

Հայրենի Գանձայուն ամռանը մի շաբաթի չափ Վահանեցն ընտանիքին հյուր է լինում Ավ. Իսահակյանը: Գանձայից ոչ հեռու՝ Ս. Հովհաննեսի մատուռում, նրանք տեսնում են շրջակա գյուղերից Վարդավառի ուխտի եկած գյուղացիներին: «Նայիր, - ասում է Վահան ինձ, - հիշում է Իսահակյանը, - ա՛խ, ինչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ինչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՞նչ դառն աղբատություն է կաթում վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՞նչ քախտոտ ուրախություն է այս: Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ինչ վիշտ ու մորմոք կա նրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ու՛ր մնաց օտարը: Մեր նոր գրողներից թունամայանը և դու, միայն երկուսդ եք զգում ժողովրդին: Ձեզանից հետո կամ նոր երգ պիտի ասել կամ պիտի լռել»:

Շիրակի գյուղերում դաշնակցական քարոզչական աշխատանք տանելուց կարճ ժամանակ հետո Վահան Տերյանը հիասթափվում է դաշնակցությունից: Այնուհետև նրան իր հորձանուտի մեջ է առնում բուլձակիյան հեղափոխությունը, որին հավատարմ էր և նրա հաղթանակի հետ մեծ հույսեր կապելով՝ ժողովրդական կոմիսարների խորհրդին է ներկայացնում «Ձեկուցագիր թուրքահայաս-

տանի մասին» և «Հայաստանի մասին դեկրետի» նախագիծը: Այս առիթով հանդիպումներ և գրույցներ է ունենում Լենինին: Զբաղեցնելով ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծած Հայկական գործերի կոմիսարիատի նախագահի տեղակալի պաշտոնը՝ Վահան Տերյանը հաճախ է մեկնում գործուղումների: Նման մի գործուղման ժամանակ էլ հիվանդ ու հյուժված բանաստեղծը կնքում է իր մահկանացուն հեռավոր Օրենբուրգում, որտեղ և հուղարկավորվում է՝ իրենից հետո թողնելով փայտե խաչով մի գերեզմանաթումբ, որը տարիներ անց այլևս հնարավոր չի լինում գտնել:

